ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՁԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 2008

Երեւան 2008

Այս գրքույկում ներկայացված է ինչպես հայաստանյան մամուլի ինքնակարգավորման՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի գործունեությունը 2008-ի ընթացքում, այլեւ երկու տասնյակ երկրների նմանատիպ մարմինների փորձն ու 2008-ի մարտահրավերները մամուլի ինքնակարգավորման ոլորտում:

Հայաստանում Դիտորդ մարմնի հիմնադրման առաջին տարվա՝ 2007-ի գործունեության վերաբերյալ մեկ այլ գրքույկից բացի, Երեւանի մամուլի ակումբը 2004-ին հրապարակել է «Ինքնակարգավորում. միջազգային փորձն ու հեռանկարները» գրքույկը, որը հայկաան մամուլի ինքնակարգավորման առաջին ազդակներից էր:

Գրքույկի հրատարակությունը ֆինանսավորել է Բաց հասարակության ինստիտուտը:

Ծրագրի ղեկավար՝ **Բորիս Նավասարդյան**
Խմբագիրներ՝ **Մեսրոպ Հարությունյան եւ Ծովինար Նազարյան**
Համակարգչային էջադրումը՝ **Նարա Մենդելյանի**

Նախաբան

Հայաստանում լրատվամիջոցների ինքնակարգավորման կառույցը՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, ձեւավորվել է 2007-ի սկզբին՝ Երեւանի մամուլի ակումբի եւ գործընկեր լրագրողական կազմակերպությունների նախաձեռնությամբ:

Հայաստանի լրատվամիջոցներին ուղղված կոչում նրանք առաջարկում էին ստեղծել պրոֆեսիոնալ էթիկայի հիմնարար նորմեր, որոնք ընդունելի կլինեին հնարավորինս շատ լրատվամիջոցների եւ լրագրողների համար եւ կկիրառվեին նրանց ամենօրյա գործունեության ընթացքում: Նախաձեռնության հեղինակները նման մարմնի ստեղծման անհետաձգելիությունը պայմանավորում էին մոտալուտ խորհրդարանական ընտրություններով եւ լրագրողներին հրավիրում համագործակցության:

2007-ի մարտի 10-ին 18 լրատվամիջոց մշակեց եւ ընդունեց լրագրողական գործունեության Վարքականոնը եւ ձեւավորեց Դիտորդ մարմնի 7 հոգանոց կազմը: Մարմնի բոլոր անդամները հեղինակավոր լրատվամիջոցների եւ մասնագիտական կազմակերպությունների ղեկավարներ են:

Դիտորդ մարմինը արտադատական կարգով քննում է Վարքականոնի խախտման մասին բողոքները եւ եզրակացություններ ընդունում: Նման դեպքերում բողոքողը պարտավորվում է չդիմել դատարան, իսկ լրատվամիջոցը պարտավորվում է հրապարակել Դիտորդ մարմնի կայացրած որոշումը:

Առանձին դեպքերում Դիտորդ մարմինը նամակով իր միջնորդությունն է առաջարկում նաեւ Վարքականոնը չստորագրած լրատվամիջոցներին:

2007-ի ընթացքում 31 լրատվամիջոց է ստորագրել Վարքականոնը եւ նրա հավելվածը հանդիսացող Հռչակագիրը՝ ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ: 2008-ին նրանց միացավ եւս 4-ը:

(Վարքականոնը, այն ստորագրած լրատվամիջոցների ցուցակը եւ Դիտորդ մարմնի կազմը հրապարակվում են սույն գրքույկում:)

2007-ի մայիսից, երբ տեղի ունեցավ Դիտորդ մարմնի առաջին նիստը, մինչեւ դեկտեմբեր, մարմինը քննել է 6 բողոք, որոնցից երկուսը վերաբերվում էին հեղինակային իրավունքին, մյուսները՝ պատասխանելու իրավունքին, անբարեխիղճ լրատվությանը, գովազդային նյութն առանց համապատասխան նշումի տպելուն:

Բացի այդ, Դիտորդ մարմինը հարցում է անցկացրել 2007-ի խորհրդարանական ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի շրջանում եւ այդ հարցումների հիման վրա ընդունել է եզրակացություն՝ Վարքականոնին եւ Հռչակագրին՝ նշված ընտրությունների լուսաբանման համապատասխանության վերաբերյալ:

2008-ի ընթացքում Դիտորդ մարմինը քննության է առել 5 գործ: Դրանց թվում առաջին անգամ կային 2 գործեր, որոնք վերաբերվում էին նաեւ Վարքականոնը չստորագրած լրատվամիջոցների: Վերջիններս, սակայն, ընդունել են Դիտորդ մարմնի միջնորդությամբ խնդիրները կարգավորելու առաջարկը:

Բացի այդ, Դիտորդ մարմինը համագործակցության նախնական համաձայնություն է ձեռք բերել ՀՀ վարչապետի եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ մամուլին առնչվող բողոքները Դիտորդ մարմնի կարգավորմանը վստահելու վերաբերյալ:

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2008 թվականի գործունեության կողքին այստեղ ներկայացնում ենք նաեւ եվրոպական այլ 20 երկրների նմանատիպ մարմինների գործունեությունը նույն ժամանակամիջոցում, ինչպես նաեւ համառոտ տեղեկություններ նրանց կազմավորման կարգի եւ պատմության, գործունեության դաշտի եւ հիմնական մարտահրավերների մասին: Այդ տեղեկությունները նրանք ներկայացրել են Բեռլինում՝ 2008-ի հոկտեմբերին կայացած՝ Եվրոպայի անկախ մամուլի խորհուրդների դաշինքի (AIPCE) տարեկան հանդիպման ժամանակ, որին մասնակցում էր նաեւ Դիտորդ մարմինը:

ՁԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի կազմը

Ընտրված է ՁԼՄ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների եւ լրագրողական կազմակերպությունների ղեկավարների հավաքում՝ 2007 թվականի մարտի 10-ին:

Հակոբ Ավետիքյան («Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր)

Լեւոն Բարսեղյան (Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ)

Աստղիկ Գեւորգյան (Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ)

Էմանուիլ Մկրտչյան («Արմինֆո» լրատվական գործակալության գլխավոր տնօրեն)

Մեսրոպ Մովսեսյան («Մելտեքս» ՍՊԸ նախագահ)

Բորիս Նավասարդյան (Երեւանի մամուլի ակումբի նախագահ)

Լիլիթ Սիմոնյան («Իրավունքի եւ ինֆորմացիայի կենտրոն» ՀԿ նախագահ, իրավաբան)

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի տարեկան հաշվետվություն. 2008 թվական

2008 թվականի մայիսի 27-28-ին Աղվերանում կայացավ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների ղեկավարների հավաք: Հավաքի ժամանակ ներկայացվեց ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի գործունեությունը նախորդ հավաքից (10.11.2007) հետո անցած ժամանակաշրջանում, կազմակերպական հարցեր եւ Դիտորդ մարմնի մասին ավելի լայն իրազեկում ապահովելու խնդիրը: Հավաքում հարց եղավ Դիտորդ մարմնի ռոտացիայի վերաբերյալ, սակայն որոշվեց, որ ներկա կազմը կարող է դեռ պաշտոնավարել:

Հավաքում որոշվեց պատրաստել գովազդային հոլովակ եւ իբրեւ սոցիալական գովազդ այն տեղադրել ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած հեռարձակվող լրատվամիջոցների եթերում: Հոլովակի նախապատրաստումը հանձն առավ Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ-ը:

■

2008 թ. հոկտեմբերի 18-ից 19-ը Աղվերանում տեղի ունեցավ «Լրատվամիջոցների ինքնակարգավորման մարմնի գործունեությունը եւ հեռանկարները» թեմայով հավաք, որին մասնակցում էին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամներն ու ինքնակարգավորման գործընթացում ներգրավված եւ լրատվամիջոցների Վարքականոնը ստորագրած ԶԼՄ-ների ղեկավարները: Հավաքի ժամանակ ներկայացվեց վերջին մեկ տարվա ընթացքում Դիտորդ մարմնի գործունեությունը, քննարկվեցին մասնագիտական էթիկայի խախտման հետ կապված նախադեպերը, որոնց վերաբերյալ Դիտորդ մարմինը եզրակացություններ է տվել, ապա նախանշվեցին առաջիկա անելիքները:

Քննարկվեց նաեւ ինքնակարգավորման նախաձեռնությանը չմիացած լրատվամիջոցների դեմ բողոքներին ընթացք տալու հարցը: Որոշվեց, որ նման բողոքի դեպքում Դիտորդ մարմինը նամակով դիմում է տվյալ ԶԼՄ-ին եւ առաջարկում իր միջնորդությունը՝ խնդիրը հարթելու գործում: Եթե լրատվամիջոցը համաձայնում է, ապա Դիտորդ մարմինը քննարկում է բողոքը եւ կայացնում իր վճիռը: Ընդ որում ԶԼՄ-ն պետք է պարտավորվի վարվել այնպես, ինչպես ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները:

■

Լրատվամիջոցների ինքնակարգավորման մարմնի գործունեությանը նվիրված հերթական հավաքը տեղի ունեցավ Ծաղկաձորում՝ 2008 թվականի դեկտեմբերի 13-ից 14-ը: Դրան մասնակցում էին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամներն ու ինքնակարգավորման գործընթացում ներգրավված ԶԼՄ-ների ղեկավարները: Հավաքի ժամանակ ներկայացվեցին 2008 թվականի հոկտեմբերից հետո Դիտորդ մարմնին հասցեագրված երեք դիմումներով քննված գործերը (տես՝ ստորեւ): Մասնակիցները ծանո-

թացան Լրատվամիջոցների հաշվետվողականության համակարգերի զարգացման եվրոպական միտումներին: Սեմինարի մասնակիցները լսեցին հաղորդումներ «Լրագրողական էթիկան եւ միջազգային իրադարձությունների ու տարածաշրջանային խնդիրների լուսաբանումը» թեմայով, ինչպես նաեւ ծանոթացան Գյումրիում, Վանաձորում եւ Կապանում 2008 թվականի հոկտեմբերին իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքներին: Հարցման նպատակն էր պարզել, թե որքանով է Հայաստանի լրատվամիջոցների գործունեությունը համապատասխանում լսարանի ակնկալիքներին:

Սեմինարի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ:

Վարչապետը ծանոթացավ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի գործունեությանը եւ աջակցություն հայտնեց իշխանությունների եւ ԶԼՄ-ների միջեւ ծագող հակասությունները արտադատական կարգով՝ Դիտորդ մարմնի միջոցով լուծելու գաղափարին: Հավաքի մասնակիցներն իրենց մտահոգությունը հայտնեցին ՀՀ արդարադատության նախարարության պատրաստած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի վերաբերյալ: Վարչապետը հավաստիացրեց, որ օրինագիծն առանց շահագրգիռ կողմերի հետ քննարկումների չի ներկայացվի խորհրդարան:

Մարդու իրավունքների պաշտպանի հետ հանդիպման ժամանակ նշվեց օմբուդսմանի գրասենյակի եւ Դիտորդ մարմնի համագործակցության անհրաժեշտությունը: Մասնավորապես, Արմեն Հարությունյանն առաջարկեց, որ Դիտորդ մարմնի նիստերին մասնակցի իր ներկայացուցչը, ինչպես նաեւ, որ համատեղ ուսումնասիրվի ԶԼՄ-ների դեմ քաղաքացիների բողոքների տիպաբանությունը:

Հավաքում նաեւ հայտարարվեց, որ ինքնակարգավորման նախաձեռնությանն են միացել եւ Վարքականոնը ստորագրել են «Նոյյան Տապան» ինֆորմացիոն-վերլուծական կենտրոնը, Հրազդանի «Հրազդան» եւ Գորիսի «Լաստ» հեռուստաընկերությունները ու «Ժամանակի միտք» թերթը:

2008 թվականի հունվար-դեկտեմբերին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի քննած նախադեպերը

1.

2008 թվականի հունվարի 11-ին «Առավոտ» օրաթերթում հրապարակվեց «Գաֆէսճեանների ու Սարգսյանների «Միությունը» չհաջողվե՞ց» հոդվածը (հեղինակ՝ Գայանե Սարգսյան), որին հետեւեց «Արմենիա» հեռուստաընկերության եւ նրա համասեփականատեր Բագրատ Սարգսյանի արձագանքը: Վերջինս նաեւ հայտնեց ընդդեմ «Առավոտի» դատական հայց ներկայացնելու մտադրության մասին:

2008 թվականի հունվարի 15-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը կոչ ուղղեց երկու լրատվամիջոցներին, որում ասված էր. «ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը մտահոգված է երկու լրատվամիջոցների (որոնցից մեկը՝ «Առավոտ» օրաթերթը ինքնակարգավորման գործընթացի մասնակից է) միջեւ կոնֆլիկտով: Նկատի ունենալով, որ խնդիրը դատական ատյաններ տեղափոխելը կարող է մեծ վնաս հասցնել լրատվամիջոցների հեղինակությանը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը կոչ է անում «Արմենիա» հեռուստաընկերությանը՝ ձեռնպահ մնալ դրանից եւ թնջուկը լուծել բանակցությունների միջոցով, իսկ «Առավոտ» օրաթերթին՝ պատրաստակամ լինել գնալու նման բանակցությունների:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է դառնալ հակասություններն արտադատական կարգով հարթելու միջնորդը»:

Կոչից հետո երկու լրատվամիջոցների ներկայացուցիչները համաձայնության եկան, որ «Առավոտը» հերքում կհրապարակի, իսկ «Արմենիան» դատական հայց չի ներկայացնի: 2008 թվականի հունվարի 19-ին «Առավոտ» օրաթերթը հրապարակեց «Արմենիան» իսկապես ծաղկում է» վերնագրով հերքում, եւ դրանով կոնֆլիկտը հարթվեց:

2.

2008 թ. փետրվարի 4-ին ԶԼՄ-ների Էթիկայի դիտորդ մարմինը դիմում ստացավ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն Կարինե Հարությունյանից, որում ասվում էր.

«2008 թվականի հունվարի 31-ին Գյումրիի «Ցայգ» հեռուստաընկերության «Ազդարար» լրատվական ծրագրի թողարկումների ընթացքում եթեր է հեռարձակվել մի տեսանյութ, որտեղ հնչեցվել է Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության անունը՝ անարդարացիորեն բացասական մեկնաբանությամբ եւ հեռուստաընկերությունը վարկաբեկելու դիտավորությամբ:

«ԳԱԼԱ» հեռուստաընկերության խմբագրակազմը համոզված է, որ նման աշխատաոճը հակասում է լրագրողական համերաշխության սկզբունքներին եւ լրագրողական մասնագիտական բարոյականության հանրայնորեն ընդունված կանոններին:

Մենք համարում ենք, որ «Ցայգ» հեռուստաընկերությունը իր այդ արարքով փորձել է արատավորել «ԳԱԼԱ» հեռուստաընկերության բարի համբավն ու ազդել նրա վարկանիշի վրա: «Ցայգ» հեռուստաընկերության այս

քայլը ունեցել է իր նախադեպերը, սակայն մենք դրանց այս մակարդակով չենք արձագանքել՝ ենթադրելով, որ դրանք թյուրիմացությունների կամ լրագրողական անփորձության հետեւանք են, եւ նման դեպքեր այլեւս չեն կրկնվի:

Հարգելի տիկնայք եւ պարոնայք,

Խնդրում եմ Ձեր իրավասությունների շրջանակներում ուսումնասիրել վերոհիշյալ միջադեպի մանրամասները եւ կատարվածին տալ ձեր մասնագիտական գնահատականը՝ լրագրողական էթիկայի չափանիշերի համաչափության տեսանկյունից»:

2008 թվականի փետրվարի 15-ին, ապա եւ ապրիլի 3-ին Դիտորդ մարմինը քննարկեց բողոքը, լսեց «Ցայգ» ՀԸ գործադիր տնօրեն Մարգարիտա Մինասյանի պարզաբանումները եւ բավարարվեց ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցներին ուղղված շրջաբերականով (առանց հրապարակման պահանջի): Շրջաբերականում մասնավորապես ասված էր.

«... Քանի որ «ԳԱԼԱ» ՀԸ բողոքը չի վերաբերում Վարքականոնի հիշյալ հոդվածների խախտումներին, Դիտորդ մարմինը ձեռնպահ է մնում եզրակացություն տալուց եւ բավարարվում է սույն Շրջաբերականով:

Դիտորդ մարմինը հորդորում է Ինքնակարգավորման գործընթացում ներգրավված բոլոր լրատվամիջոցներին՝ այլ լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հերքում կամ պատասխան հրապարակել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան համարելու, որ տեղեկությունը հրապարակած լրատվամիջոցը պատշաճ չի վերաբերվել հերքում կամ պատասխան հրապարակելու պահանջին:

Դիտորդ մարմինն անհրաժեշտ չի համարում այս Շրջաբերականի հրապարակումը ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների շրջանակից դուրս»: (Այս նույն պատճառով Շրջաբերականը չի հրապարակվում նաեւ այս ժողովածուում):

3.

2008 թվականի հոկտեմբերի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին էր դիմել «Առավոտ» օրթերթի լրագրող Ռուզան Մինասյանը: Նա տեղեկացրել էր, որ ՀՀ Երեւանի քաղաքացիական դատարանի վարույթում է (դատավոր՝ Կարինե Պետրոսյան) գտնվում ՀՀ ոստիկանության՝ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վարչության աշխատակից Արթուր Ղեւոնդյանի հայցն ընդդեմ «Առավոտ» օրաթերթի: Հայցվորը վիճարկում էր Ռ. Մինասյանի «Երբ հարեւանդ ոստիկան է» հրապարակումը՝ համարելով, որ արատավորվել է իր պատիվն ու արժանապատվությունը, եւ պահանջում էր հերքում հրապարակել: Ռուզան Մինասյանը խնդրում էր Դիտորդ մարմնի եզրակացությունը՝ արդյո՞ք «պատիվ արատավորող» կամ «վիրավորանք» կարող են դիտվել հայցվորի նշած արտահայտությունները:

Դիտորդ մարմինը քննարկեց դիմումը եւ տվեց հետեւյալ եզրակացությունը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
31.10.2008թ.

2008 թվականի հոկտեմբերի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզան Մինասյանը՝ խնդրելով ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից եզրակացություն տալ թերթի 2008 թվականի հունիսի 25-ի համարում հրապարակված «Եթե հարեւանդ ոստիկան է» հոդվածի վերաբերյալ:

Սույն եզրակացությունը պարզաբանում է հիշյալ հրապարակման համապատասխանությունը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 31 լրատվամիջոցների մշակած եւ ստորագրած Վարքականոնին:

Քննարկելով «Առավոտ» օրաթերթի 2008 թվականի հունիսի 25-ի համարում հրապարակված՝ Ռուզան Մինասյանի «Եթե հարեւանդ ոստիկան է» հոդվածի համապատասխանությունը ԶԼՄ-ների Վարքականոնին, Դիտորդ մարմինը արձանագրում է հետեւյալը.

Հոդվածում Վարքականոնի եւ մասնագիտական էթիկայի միջազգայնորեն ընդունված կանոնների միանշանակ խախտումներ չկան:

Միաժամանակ, որոշ տարակույսների տեղիք է տալիս «... Ղեւոնդյանը, գործի դնելով իր ոստիկանական կապերը...» արտահայտությունը, որը, ըստ հոդվածագրի, հիմնված է վկայի ցուցմունքների վրա, սակայն հոդվածում համապատասխան հղում արված չէ եւ ընկալվում է որպես հեղինակային խոսք:

Այսուհանդերձ, այն արտահայտությունները, որոնք վիճարկվում են իբրեւ «պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկություններ» եւ «փաստացի անճշտություններ», ոչ թե փաստեր են, այլ հոդվածում բերված փաստերի հիման վրա արված եզրակացություն կամ գնահատող դատողություն, իսկ դրանց ճշմարտացիությունը կամ իրականությանը համապատասխանությունը ապացուցելի չեն: Այդ մասին նշված է նաեւ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի՝ «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործով վճռի 46-րդ կետում. **«Դատարանի կարծիքով անհրաժեշտ է տարբերակում դնել փաստերի եւ գնահատող դատողությունների միջեւ: Եթե փաստերի հավաստիությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է»** (European Court of Human Rights, **CASE OF LINGENS v. AUSTRIA**, 08. 07.1986, Application No: 9815/82, Publication: A 103): Այս ձեւակերպումը Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը հետագայում եւս մի քանի անգամ օգտագործել է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ քննված նմանատիպ այլ գործերի վճիռներում:

Ռուզան Մինասյանի հոդվածում օգտագործված են որոշ սուր արտահայտություններ, որոնք արտացոլում են հասարակության մեջ արմատացած կարծրատիպերը եւ նույնպես լրագրողական մասնագիտական էթիկայի տեսակետից վիրավորանք համարվել չեն կարող:

2008 թվականի նոյեմբերի 14-ի նախապատրաստական դատական նիստի ընթացքում Ռ. Մինասյանի ներկայացուցիչը վերոհիշյալ եզրակացությունը ներկայացրեց դատարանին, ապա կողմերը դատարանին հայտնեցին, որ իրենք բանավոր համաձայնության են եկել այն մասին, որ «Առավոտ» օրաթերթում եզրակացությունը տպագրվելու դեպքում հայցվորը կհրաժարվի հայցից: 2008 թվականի նոյեմբերի 15-ին «Առավոտը» հրապարակեց Դիտորդ մարմնի եզրակացությունը, որից հետո Արթուր Ղեւոնդյանը ներկայացրեց հայցից հրաժարվելու միջնորդություն, եւ 2008 թվականի նոյեմբերի 26-ին դատարանը վճռեց գործը կարճել:

4.

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին էր դիմել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ վարչության անդամ Սառա Պետրոսյանը: Նա տեղեկացրել էր, որ «Հետք» էլեկտրոնային թերթի 2008 թվականի մայիսի 26-ի համարում, ապա եւ «Ազգ» օրաթերթի հունիսի 13-ի «Հետքի» ներդիրում տպագրված «Աճուրդ Թեղուտում» հոդվածը (հեղինակ՝ «Հետքի» Տավուշի թղթակից Ոսկան Սարգսյան) տպագրվել է «Փակագիծ» օրաթերթի հունիսի 12-ի համարում՝ առանց «Հետքին» հղում կատարելու եւ Անանա Հակոբյան ստորագրությամբ: Ս. Պետրոսյանի ահազանգին ի պատասխան «Փակագիծ» օրաթերթի գլխավոր խմբագիր Ագապի Հայկազունին ասել է, թե սխալը «համակարգչային աշխատողի պատճառով է եղել» եւ հանձն է առել ուղղել, սակայն հունիսի 18-ին տպագրել է ուղղում, որում ընդամենը ասվել է, թե հիշյալ նյութը «... տեխնիկական պատճառներով օրաթերթի թղթակից Անանա Հակոբյանի անունով է տպագրվել: Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը»: Քանի որ ըստ էության ուղղումը չէր նշել աղբյուրը, այսինքն գրագողության հարցը մնում էր, Սառա Պետրոսյանը խնդրում էր այն քննարկել Դիտորդ մարմնի նիստում:

Դիտորդ մարմնի հոկտեմբերի 31-ի նիստում արձանագրվեց, որ «Փակագիծը» ինքնակարգավորման նախաձեռնությանը չի միացել եւ չի ստորագրել ԶԼՄ-ների էթիկայի Վարքականոնը, հետեւաբար Դիտորդ մարմինն իրավասու չէ քննելու նրա գործողությունները: Որոշվեց նման դեպքերի համար նախապատրաստել նամակի տեքստ, որը կուղարկվի նախաձեռնությանը չմիացած ԶԼՄ-ի ղեկավարին՝ առաջարկելով, որ Դիտորդ մարմինը միջնորդ լինի հարթելու խնդիրները: Մասնավորապես, «Փակագիծ» օրաթերթի խմբագրին ուղարկվեց հետեւյալ նամակը.

«Փակագիծ» թերթի գլխավոր խմբագիր
տիկին Ագապի Հայկազունուն

Հարգարժան տիկին Հայկազունի,

2007 թվականի մարտի 10-ին Հայաստանի մի խումբ լրատվամիջոցների ղեկավարներ ընդունեցին միասնական էթիկական կանոններ (Վարքականոն) եւ ընտրեցին ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին:

Այս նախաձեռնության նպատակը Հայաստանում գործող լրատվամիջոցներում պրոֆեսիոնալ էթիկայի համընդհանուր եւ միջազգայնորեն ընդունված նորմերի հաստատումն է, իսկ Դիտորդ մարմնի առաքելությունը՝ ծագող վեճերը արտադատական կարգով լուծելը, Վարքականոնի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների քննարկումն ու եզրակացություններ կայացնելը: Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցը պարտավոր է Դիտորդ մարմնի եզրակացությունը հրապարակել իր իսկ էջերում (եթերում):

Այսօր արդեն նախաձեռնությանը միացել են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 31 լրատվամիջոցներ (Վարքականոնն ու այն ստորագրած լրատվամիջոցների ցանկը կցվում են):

Չնայած դիտորդ մարմինը իրավասու է քննել հիմնականում նախաձեռնությանը միացած եւ Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների դեմ բողոքները, այսուհանդերձ, բացառիկ դեպքերում այն իրեն իրավունք է վերապահում նաեւ

հանդես գալու հայտարարություններով, ինպես նաեւ՝ ստանձնելու միջնորդի դեր, եթե բողոքը վերաբերում է նախաձեռնությանը չմիացած լրատվամիջոցին, եւ այդ լրատվամիջոցը տալիս է իր համաձայնությունը:

Մեզ է դիմել լրագրող Սառա Պետրոսյանը՝ Ձեր թերթի հուլիսի 12-ի համարում արտատպված «Ամուրդ Թեղուտում» հոդվածի կապակցությամբ: Դիմողը պարտավորվում է չդիմել դատարան, եթե հարցը քննվի Դիտորդ մարմնում, եւ ընդունել Դիտորդ մարմնի եզրակացությունը:

Եթե Դուք համաձայնություն տաք, որպեսզի Դիտորդ մարմինը ստանձնի միջնորդի դերը Ձեր լրատվամիջոցի եւ բողոքողի միջեւ, ապա մենք պատրաստ ենք քննարկել եւ տալ մեր եզրակացությունը, որը Դուք կպարտավորվեք հարապարկել Ձեր ՁԼՄ-ում առանց ձեր մեկնաբանության:

Նամակը «Փակագծի» խմբագրին ուղարկվեց 2008 թ. նոյեմբերի 27-ին, իսկ արդեն դեկտեմբերի 4-ի համարում թերթը ուղղում հրապարակեց, որում ասվում էր, թե հիշյալ հոդվածի հեղինակը Սառա Պետրոսյանն է, սակայն էջադրի անփութության պատճառով տպագրվել է Աննա Հակոբյան անուն-ազգանունը:

Թեպետ դարձյալ հեղինակի անունը ճիշտ չէր նշված (Ոսկան Սարգսյանի փոխարեն՝ Սառա Պետրոսյան), այսուհանդերձ Սառա Պետրոսյանը հայտնեց, որ ինքը բավարարված է այս ուղղմամբ:

5.

Նմանատիպ մի դիմում էլ ներկայացրել էր «Մելտեքս» ՍՊԸ նախագահ Մեսրոպ Մովսեսյանը՝ նշելով, որ «Ժամանակի միտք» թերթը պարբերաբար օգտագործում է «Ա1+» ինտերնետային կայքի նյութերը՝ առանց հղում կատարելու սկզբնաղբյուրին:

Դիտորդ մարմինը, դարձյալ հաշվի առնելով, որ հիշյալ թերթը չի միացել ինքնակարգավորման նախաձեռնությանը, նամակ ուղարկեց նրա գլխավոր խմբագիր Սիմոն Սարգսյանին.

«Ժամանակի միտք» թերթի գլխավոր խմբագիր
պարոն Սիմոն Սարգսյանին

Հարգարժան պարոն Սարգսյան,

2007 թվականի մարտի 10-ին Հայաստանի մի խումբ լրատվամիջոցների ղեկավարներ ընդունեցին միասնական էթիկական կանոններ (Վարքականոն) եւ ընտրեցին ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին:

Այս նախաձեռնության նպատակը Հայաստանում գործող լրատվամիջոցներում պրոֆեսիոնալ էթիկայի համընդհանուր եւ միջազգայնորեն ընդունված նորմերի հաստատումն է, իսկ Դիտորդ մարմնի առաքելությունը՝ ծագող վեճերը արտադատական կարգով լուծելը, Վարքականոնի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների քննարկումն ու եզրակացություններ կայացնելը: Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցը պարտավոր է Դիտորդ մարմնի եզրակացությունը հրապարակել իր իսկ էջերում (եթերում):

Այսօր արդեն նախաձեռնությանը միացել են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 31 լրատվամիջոցներ (Վարքականոնն ու այն ստորագրած լրատվամիջոցների ցանկը կցվում են):

Չնայած դիտորդ մարմինը իրավասու է քննել հիմնականում նախաձեռնությանը միացած եւ Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների դեմ բողոքները, այսուհանդերձ, բացառիկ դեպքերում այն իրեն իրավունք է վերապահում նաեւ հանդես գալու հայտարարություններով, ինպես նաեւ՝ ստանձնելու միջնորդի դեր, եթե բողոքը վերաբերում է նախաձեռնությանը չմիացած լրատվամիջոցին, եւ այդ լրատվամիջոցը տալիս է իր համաձայնությունը:

Մեզ է դիմել «Մելտեքս» ՍՊԸ («Ա1+» ՀԸ) հիմնադիր Մեսրոպ Մովսեսյանը՝ Ձեր թերթում պարբերաբար «Ա1+» ինտերնետային կայքից կատարվող առանց հղումների արտատպությունների կապակցությամբ: Դիմողը պարտավորվում է չդիմել դատարան, եթե հարցը քննվի Դիտորդ մարմնում եւ ընդունել Դիտորդ մարմնի եզրակացությունը:

Եթե Դուք համաձայնություն տաք, որպեսզի Դիտորդ մարմինը ստանձնի միջնորդի դերը Ձեր լրատվամիջոցի եւ բողոքողի միջեւ, ապա մենք պատրաստ ենք քննարկել եւ տալ մեր եզրակացությունը, որը Դուք կպարտավորվեք հարապարկել Ձեր ՁԼՄ-ում առանց ձեր մեկնաբանության:

Սիմոն Սարգսյանը օպերատիվ արձագանքեց նամակին՝ պատասխան գրությամբ հայտնելով. «… հանդիպել ենք պարոն Մովսեսյանի հետ եւ եկել ընդհանուր համաձայնության՝ այսուհետեւ անմիջապես ինֆորմացիաներում (ոչ թերթի վերջին էջում հիշատակման ձեւով) հղում կատարելու մասին»:

Սիմոն Սարգսյանը տեղեկացրել էր նաեւ, որ իրենք միանում են ինքնակարգավորման նախաձեռնությանը եւ ստորագրում Վարքականոնը:

ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Մենք՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներս

- գիտակցելով մասնագիտական վարքի կանոններին հետեւելու եւ դրա շուրջ համախմբվելու անհրաժեշտությունն ու հնարավորինս բարձր աշխատանքային եւ բարոյական չափանիշներ պահպանելու լրագրողների պարտավորությունը,

- ընդգծելով հանրության տեղեկացված լինելու իրավունքը եւ տեղեկացնելու՝ ԶԼՄ-ների պարտականությունը,

- մատնանշելով խմբագրական անկախության պաշտպանության եւ որեւէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտությունը,

- ընդունելով, որ ԶԼՄ-ներն ու լրագրողները հաշվետու են իրենց լսարանի եւ միմյանց առջեւ,

- արձանագրելով, որ հնարավոր չէ բոլոր դեպքերի համար սահմանել միասնական կանոններ, սակայն կարելի է եւ հնարավոր է պահպանել պրոֆեսիոնալ լրագրության համընդհանուր չափանիշները,

ընդունում ենք հետեւյալ սկզբունքներն ու դրանցից բխող պարտավորությունները

1. Ճշգրտություն եւ անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

1.1. մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2 եթե խմբագրությունը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս անպայման նշել այդ մասին,

1.3. վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա,

1.4. հստակ սահմանազատել փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը կարծիքներից, վերլուծություններից ու մեկնաբանություններից,

1.5. ձգտել, որ վերնագրերը, հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

1.6. չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում եւ տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու եւ միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

2.1. հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները,

2.2. հնարավորինս խուսափել տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որեւէ պարագայում չբացահայտել այն,

2.3. խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ եւ գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է բացատրվի բուն հրապարակման մեջ,

2.4. հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները:

3. Խմբագրական անկախություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

3.1. հստակ սահմանազատել լրագրողական նյութերը գովազդից. յուրաքանչյուր հրապարակում, որի դիմաց վճարվել է, պետք է այդ մասին նշում ունենա,

3.2. խմբագրական լուսաբանումներում գովազդատուներին ու հովանավորներին արտոնություններ չտալ,

3.3. դիմակայել իրադարձությունների լուսաբանման վրա ազդելու նպատակով գովազդատուների, հովանավորների, ԶԼՄ սեփականատերերի գործադրած ճնշումներին,

3.4. հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար խոստացվող վճարներից, նվերներից, ինչը մասնագիտական անկախության հետ հակասության մեջ է մտնում եւ հանգեցնում է վստահության կորստի:

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

4.1. հարգել եւ պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը,

4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար,

4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչպես նաեւ սեռական հանցագործությունների զոհերի, **ինքնասպանություն գործած անձանց (փոփոխություն՝ Ծաղկաձորում կայացած հավաքում, 10. 11. 2007 թ.)** ինքնությունը բացահայտելիս,

4.4. ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,

4.5. պահպանել անմեղության կանխավարկածը. մինչեւ դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաստանի իրավունքի եւ հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ:

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն,

5.3. որեւէ ձեւով չքարոզել բռնություն, պոռնոգրաֆիա, պատերազմ,

5.4. զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները եւ հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ իբրեւ տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների եւ հնարավոր զոհերի հարազատների եւ ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու այն անձանց, ում հասցեին մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

6.3. ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք,

6.4. քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ՁԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Մենք պարտավորվում ենք ընտրությունների եւ հանրաքվեների պաշտոնական քարոզչության ժամանակաշրջանում առաջնորդվել սույն Վարքականոնին կից հավելվածում շարադրված սկզբունքներով:

Մենք՝ սույն Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչներս ընդունում ենք մեր իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու մեր գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն Վարքականոնի դրույթներին եւ պատրաստակամություն ենք հայտնում Դիտորդ մարմնի որոշումը հրապարակելու մեր լրատվամիջոցներում:

Ընդունվել է սույն Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների եւ լրագրողների հավաքում՝ 2007 թվականի մարտի 10-ին:

Ցանկ
Վարքականոնը ստորագրած ԶԼՄ-ների

1. «Ցայգ» ՀԸ (Գյումրի)
2. «Մեդիա սթայլ» ընկերություն
3. «Ռադիո Հայ»
4. «Առավոտ» օրաթերթ
5. «Հայկական երկրորդ հեռուստաալիք»
6. «Արմինֆո» ԼԳ
7. «Դելովոյ էքսպրես» թերթ
8. «Կումայրի» թերթ (Գյումրի)
9. «Գալա» ՀԸ (Գյումրի)
10. «Ազգ» օրաթերթ
11. «Lragir.am» ինտերնետային թերթ
12. «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթ (Վանաձոր)
13. «Ա1+» ՀԸ
14. «Ռեսպուբլիկա Արմենիա»
15. «Միգ» ՀԸ (Վանաձոր)
16. «Երկիր մեդիա» ՀԸ
17. «168 ժամ» թերթ
18. «Լոռի TV» (Վանաձոր)
19. «Ռեգնում» ԼԳ Անդրկովկասյան խմբագրություն
20. «Սոսի» ՀԸ (Կապան)

29. 10. 2007-ին ստորագրել են

1. STV1 ՀԸ (Սեւան)
2. «Սեւան» թերթ (Սեւան)
3. «Լոռու մարզ» թերթ (Վանաձոր)
4. «Աբովյան» ՀԸ (Աբովյան)
5. «Անկյուն գումարած 3» ՀԸ (Ալավերդի)
6. «Տեսանկյուն» թերթ (Նոյեմբերյան)
7. «Քամուտ» ՀԸ (Նոյեմբերյան)
8. «Բան ու գործ» թերթ (Գորիս)
9. «Ալտ» ՀԸ (Արմավիր)

11. 11. 2007-ին ստորագրել են

1. «Դեմո» թերթ (Ստեփանակերտ)
2. Karabakh-open.com ինտերնետային հրատարակություն (ԼՂՀ)

13.12.2008-ին ստորագրել են

1. «Նոյյան Տապան» ինֆորմացիոն-վերլուծական կենտրոն
2. «Հրազդան» ՀԸ (Հրազդան)
3. «Լաստ» ՀԸ (Գորիս)
4. «Ժամանակի միտք» թերթ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Եվրոպական երկրներում լրատվամիջոցների ինքնակարգավորման մարմինների գործունեությունը 2008-ին եւ ընդհանուր տեղեկություններ

Ադրբեջան

Չնայած Ադրբեջանի մամուլի խորհրդի գործունեությանը, երկրում բավական շատ են դատական գործընթացներն ընդդեմ լրագրողների: Միայն 2008-ի ընթացքում 19 դատավճիռ է կայացվել նրանց դեմ: Նրանցից երկուսին՝ «Ազադլիգ» եւ «Բիզիմ Յոլ» թերթերի գլխավոր խմբագիրներին դատարանը դատապարտել է ազատազրկման: Շատերի նկատմամբ կիրառվել է պայմանական ազատազրկում: Միաժամանակ լրագրողներն Ադրբեջանում ենթարկվում են ֆիզիկական սպառնալիքների եւ հարձակման, որոնց հեղինակները հազվադեպ, բայց հայտնվում են բանտերում:

Ադրբեջանի մամուլի խորհուրդը բողոքներն ընդունում է եռաստիճան համակարգով: Նախ՝ քարտուղարությունում, ապա բողոքարկման հանձնաժողովում, ապա՝ գործադիր վարչությունում:

2008-ի միայն առաջին 8 ամիսներին Ադրբեջանի մամուլի խորհուրդն ստացել է 337 բողոք: Դրանցից 243-ը կարգավորվել են միջնորդական բանակցությունների միջոցով. երկու կողմն էլ խոստացել են գրավոր համաձայնություն կնքել այդ մասին: Մամուլի խորհրդի իրավասությունից դուրս 23 գործ մերժվել է, որից 12-ը լրացուցիչ քննության կամ դատաքննության կարիք ունեին: Ստացված բողոքներից 223-ը կարող էր վիճարկվել դատարանում, սակայն խորհուրդը ստորագրություն է վերցնում բողոքողից, որ նա չի դիմի դատարան մինչեւ խորհրդի վերջնական եզրակացությունը:

Նշված ամիսներին 337 դիմումատուներից 138-ը տարբեր անհատներ են եղել, 131-ը՝ կառավարական կառույցներ, 13-ը՝ քաղաքական եւ հասարակական կազմակերպություններ, նաեւ՝ 19 լրագրողներ: 36-ը տարբեր այլ աղբյուրներ են:

Քարտուղարությունից բողոքարկման հանձնաժողով (կազմված է 7 հոգուց՝ 3 լրագրող եւ հանրության 3 ներկայացուցիչ. նախագահին նրանք ընտրում են ռոտացիոն սկբունքով) հասած 96 գործերի լսումների ընթացքում 61 գործի շուրջ կողմերը եկել են համաձայնության: Գործադիր վարչություն հասած 35 գործերի կապակցությամբ նույնքան թվով երաշխավորություններ են ընդունվել: Մամուլի խորհուրդն այս մակարդակում ընդունել է 28 որոշում, որից 22-ը լիովին դրական է եղել բողոքողի համար, իսկ մնացած 6-ը հետ է ուղարկվել քարտուղարություն՝ լրացուցիչ քննության համար:

Մարզային եւ հանրապետական մամուլը զարգացնելու նպատակով Ադրբեջանի կառավարությունը մշակել է հայեցակարգ, որը նախատեսում է սարքավորումներով ապահովված լրագրողական ենթակառուցվածքներ, հատուկ նախագծերի ֆինանսավորում:

Ավստրիա

Ավստրիական թերթերի ընկերակցությունը (ԱԹԸ), որը միավորում է Ավստրիայի գլխավոր խմբագիրներին եւ արիմիության դեր կատարում, 2001-ին կասեցրեց Ավստրիական մամուլի խորհրդի (ԱՄԽ) գործունեությունը: Պաշտոնական պատճառն այն էր, որ հրատարակիչներն ու սեփականատերերը չափազանց ուժգին էին զգում արիմիության կշիռը Խորհրդի տարբեր հարթություններում:

Մամուլի ինքնակարգավորման մի նոր ինստիտուտի հրամայականը նորից հրատապ դարձավ 2007-ին, երբ հանրությունում մտահոգություն առաջացավ լրագրողական էթիկայի առնչությամբ (հանրային հնչեղություն ստացած երկու գործերի լուսաբանման ընթացքում մամուլն օգտագործել էր զոհերի լուսանկարները՝ խաթարելով ե'ւ իրավական, ե'ւ բարոյական նորմերը): Դրան խանգարող պատճառներից մեկն, օրինակ, քաղաքական հստակ կողմնորոշում ունեցող «Կրոնենցայտունգի» լայն ազդեցությունն էր հանրության եւ քաղաքական օղակների վրա: Եվ ահա 2008-ի հուլիսին Մամուլի խորհուրդը վերականգնելու որոշում կայացվեց: Պաշտոնապես այն իր աշխատանքն սկսելու էր աշնանից՝ նոր կառավարության հաստատումից հետո միայն:

Բելգիա, Ֆլանդրիա/Ֆլամանդիա

Բելգիայում 2002-ին հիմնադրված մամուլի խորհուրդը զբաղվում է միայն ֆլամանդական մամուլի հարցերով: Վալոնյան, այսինքն՝ ֆրանսիալեզու մամուլը նման խորհուրդ չի ձեւավորում:

Էթիկայի վարքականոնը, որի վրա հենվում է ֆլամանդական մամուլի խորհուրդը, ընդունվել է դեռեւս 1982-ին: 2008-ին ձեւավորվել է աշխատանքային խումբ, որը մինչեւ 2009-ի ավարտը պետք է նոր վարքականոն մշակի՝ ներառելով նախորդ ուղեցույցերը: Նոր վարքականոնը պետք է բաց լինի պարբերական թարմացումների համար:

Ֆլամանդական մամուլի խորհրդում ստացված բողոքների (տարեկան 30-40-ի կարգի) 60 տոկոսը վերաբերվում է անբարեխիղճ լրատվությանը, իսկ 1/3-ը՝ մասնավոր կյանքին: Վերջին շրջանում նոր միտում է նկատվում՝ իրենց մասնավոր կյանքին լրագրողական միջամտությունների դեմ բողոքներ են ներկայացնում հանրային գործիչները: Այդ առթիվ կայացված որոշումների 2/3-ը բողոքողի օգտին են եղել:

2008-ին խորհուրդն առաջին անգամ բողոքներ է ստացել՝ ընդդեմ ինտերնետային 5 հրապարակումների:

2007-ին խորհուրդը ստիպված էր ուղեցույց մշակել, թե որ դեպքերում եւ ինչ պայմաններում են ընդունելի գաղտնի տեսա-ձայնագրությունները: Առիթը մի ռադիոկայանի եւ մի մասնավոր հեռուստաընկերության կողմից նման տեխնիկայի կիրառումն էր: Երկու դեպքում էլ խորհուրդը եզրակացրել է, որ դրա ծայրահեղ անհրաժեշտությունը չկար:

Գենտի (Ֆլանդրիա) համալսարանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եւ բողոքարկուները, եւ գլխավոր խմբագիրները մեծապես բավարարված են խորհրդի կայացրած որոշումներով:

Բոսնիա եւ Հերցեգովինա

Բոսնիա-Հերցեգովինայի մամուլի խորհուրդը (ԲՀՄԽ) զբաղվում է միայն տպագիր մամուլով ամբողջ Բոսնիա-Հերցեգովինայի եւ Սերբական հանրապետության դաշնության տարածքում:

Նրա կազմում են ասամբլեան, տնօրենների խորհուրդը, բողոքարկման հանձնաժողովը եւ քարտուղարությունը: Ասամբլեան բարձրագույն մարմինն է, որի կազմում են Խորհրդի հիմնադիրների՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի թերթերի հրատարակիչները եւ Լրագրողների ընկերակցությունը: Տնօրենների խորհուրդն ունի 9 անդամ՝ հիմնականում հրատարակիչներ, ովքեր տարին 4-5 անգամ նիստեր են գումարում՝ քննարկելու Խորհրդին առնչվող հարցեր:

Բողոքարկման հանձնաժողովը կազմված է 8 անդամից. նրանցից 4-ը հանրության հեղինակավոր ներկայացուցիչներ են, 2-ը՝ պրոֆեսիոնալ լրագրողներ, 2-ը՝ հրատարակիչներ: Հանձնաժողովը տարեկան 5-6 նիստ է անում՝ որոշումներ կայացնելու տպագիր մամուլի հրապարակումների դեմ քաղաքացիների բերած բողոքների առնչությամբ:

Մամուլի խորհրդին ուղղված դիմումների քանակն աճելու միտում ունի. 2008-ի առաջին կեսում ստացված դիմումները գերազանցում են նախորդող ամբողջ տարվա ցուցանիշը՝ 55 դիմում: 19 բողոք լուծվել է միջնորդությամբ, 10 բողոք բավարարվել է, 14-ը՝ ոչ: Մի գործ ընթացքում է, մյուսները դուրս են Խորհրդի իրավասությունից:

Բողոքների մեծ մասը վերաբերվում է հրապարակումները հերքելուց հրաժարվելուն: Դիմողները բողոքել են նաեւ իրենց մասնավոր կյանքին միջամտելու, ինչպես նաեւ երեխաների իրավունքների խախտման հետ կապված: Բացի նշված հարցերի շուրջ որոշում կայացնելը, խորհուրդը «Հիշեցումներ» է ուղարկել բոլոր խմբագրություններ:

Խորհուրդն ստիպված է եղել դիրքորոշում արտահայտել նաեւ ողբերգականորեն զոհված մարդկանց լուսանկարների հրապարակման, ինչպես նաեւ լրագրողների դեմ ֆիզիկական հարձակումների, նրանց մասնագիտական գործունեությունը հանրային կառույցների կողմից խոչընդոտելու դեպքերի կապակցությամբ:

Իրենց գործունեությունը ԲՀՄԽ-ի ներկայացուցիչները քարոզել են տարբեր սեմինարներում եւ կոնֆերանսներում: Խորհուրդն ուսանողների համար կազմակերպել է նաեւ մեկ «ամառային դպրոց»՝ լրագրողական չափանիշների, ինքնակարգավորման եւ կարգավորման տարբերության, գենդերային հարցերի եւ դատական լուսաբանման շուրջ: Եվս մեկ սեմինար Խորհուրդը կազմակերպել է առաջին ատյանի դատարանի դատավորների համար՝ քննարկելով Վարկաբեկումից պաշտպանության մասին օրենքի կիրառման հարցեր:

Բուլղարիա

Բուլղարիայում մամուլի ինքնակարգավորման մարմինը կոչվում է Լրագրողական էթիկայի ազգային խորհուրդ եւ գրանցվել է 2006-ին՝ որպես հիմնադրամ: Խորհրդի ձեւավորման հիմքում ընկած են «Բուլղարական մամուլի էթիկայի կանոնները», որոնք ստորագրել է երկրի լրատվամիջոցների մեծամասնությունը:

Հիմնադիրներն են ոլորտի հեղինակավոր 5 կազմակերպություն՝ Բուլղարիայի հրատարակիչների միությունը, Բուլղարական լրագրողների միությունը, Բուլղարական հեռարձակողների ընկերակցությունը, Մամուլի զարգացման կենտրոնը եւ Բուլղարական մամուլի կոալիցիան:

ԼԷԱԽ-ի ղեկավար խորհուրդը զբաղվում է ռազմավարական խնդիրներով, բյուջեի պլանավորմամբ եւ տարեկան հաշվետվությամբ, կանոնադրական փոփոխություններով եւ այլն:

Բողոքներն ընդունում են երկու անկախ հանձնաժողով՝ տպագիր եւ էլեկտրոնային մամուլի՝ Գանգատարկման հանձնաժողովները: Հիմնադրման օրից դրանք հետազոտել են 120 գործ, որից 24-ն ուղարկվել է լրացուցիչ քննության: 6 գործ կարգավորվել է միջնորդության միջոցով, իսկ 12 գործ դուրս է եկել քննությունից՝ համապատասխան լրատվամիջոցի անմիջական արձագանքի շնորհիվ:

Գանգատների գերակշիռ մասը վերաբերվում է զրպարտություններին: Խտրական տեղեկատվության, քսենոֆոբիայի, գրաքննության մասին եւ նման այլ դժվարին թեմաներ առայժմ դուրս են մնում հանձնաժողովների տեսադաշտից: Ընթացակարգային դժվարությունների պատճառով հանձնաժողովները չեն հասցնում քննել բոլոր գործերը, բայց առայժմ բաց են պահում դռները բոլոր տեսակի, նույնիսկ՝ վերացական բողոքների համար:

Մամուլի պատասխանատուները նշում են, որ չնայած Բուլղարիայում մամուլի նկատմամբ վստահության ցածր աստիճանին, բուլղարական դատարաններն է՛լ ավելի քիչ վստահություն են վայելում, ուստի ինքնակարգավորման մարմնի գործունեությունը ավելի քան անհրաժեշտ է:

Գերմանիա

Գերմանական մամուլի ինքնակարգավորման մարմինը պետք է ձեւավորվեր 1952-ին՝ Գերմանիայի ներքին գործերի նախարարության ընդունած նախագծով: Սակայն լրագրողական եւ հրատարակչական կազմակերպություններն ընդդիմացան կառավարական այս միջամտությանը եւ 1956-ին ձեւավորեցին իրենց՝ անկախ մամուլի խորհուրդը: Նրանք նաեւ ձեւավորեցին խորհրդի ֆինանսավորումն ապահովող հովանավորների ընկերակցություն:

Սակայն այսօր էլ ամեն բան հարթ չէ կառավարության եւ մամուլի խորհրդի հարաբերություններում: Այլ լրագրողական կազմակերպությունների հետ միասին մամուլի խորհուրդը դիմադրություն է ցույց տալիս անվտանգությանը վերաբերող օրենսդրական ակտերին: Դրանցից մեկը պարտավորեցնում է հեռահաղորդակցության պրովայդերներին՝ առնվազն 6 ամիս պահպանել տեղեկությունները, թե ով ում հետ, երբ եւ ինչքան ժամանակով է քաղաքային կամ բջջային հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով կապ հաստատել (խոսակցության բովանդակությունը չի պահպանվում): Այս տեղեկությունները դատարանի որոշմամբ կարող են հասանելի լինել ոստիկանությանը, դատախազությանը եւ դատարաններին:

Գերմանական մամուլի խորհրդի եզրակացությամբ, կառավարության այս նախաձեռնությունը ոտնահարում է մամուլի ազատությունը, տեղեկության աղբյուրին զրկում գաղտնի մնալու հնարավորությունից եւ պաշտպանությունից, ուստի լրագրողին էլ՝ աղբյուրից: Կոալիցիա կազմելով՝ լրագրողական կազմակերպությունները փոփոխություններ են առաջարկել

օրենսդրական այդ ակտում՝ լրագրողների հաղորդակցության գաղտնիության իրավունքը հավասարեցնել խորհրդարանի անդամների եւ մյուս արտոնյալ խմբերի կարգավիճակին, համաչափության սկզբունք չկիրառել տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, ամբողջությամբ տեղյակ պահել լրագրողին, եթե նրա հաղորդակցությունը հսկվում է, պահպանված տվյալներից օգտվել միայն լրջագույն հանցագործությունների հետաքննության դեպքում:

Գերմանական մամուլի խորհուրդը պահանջում էր նաեւ վերացնել «օնլայն եւ տեղային որոնման» մասին ակտը, որը հնարավորություն է տալիս նախաքննական մարմիններին հետազոտել կասկածվողի համակարգչային եւ ինտերնետային նյութերը, նույնիսկ եթե դրանք կապված են մեկ ուրիշ՝ հանցագործության հետ կապ չունեցող մարդու հետ: Խորհուրդը պնդում էր, որ լրագրողը չպետք է ներքաշվի իր հետ կապ չունեցող գործերի հետաքննությունում: Թեեւ ակտն ամբողջությամբ չվերացվեց, քանի որ մասամբ առնչվում է Գերմանիայի Հիմնական օրենքին (սահմանադրությանը), սակայն հաջողվեց հասնել այն բանին, որ Սահմանադրական դատարանը մի նոր սահմանադրական դրույթ սահմանեց, ըստ որի սեփական կյանքի պաշտպանության ընդհանուր իրավունքից բացի անհատն օժտվեց տեխնոլոգիական համակարգի տեղեկատվության գաղտնիության «հիմնարար իրավունքով»:

2006-ից ի վեր մամուլի խորհուրդը ներքաշված էր դատավարություններում, որ նրա դեմ նախաձեռնել էր թերթերից մեկը՝ խորհրդի կայացրած մի որոշման կապակցությամբ: Ի վերջո, խորհրդին հաջողվեց հաստատել իր իրավացիությունը՝ հասնելով մինչեւ բարձրագույն դատարան:

Գերմանական մամուլի խորհրդի 28 մշտական անդամներին նշանակում է հովանավորների ընկերակցությունը եւ նրանցից ընտրում է բողոքարկման երկու 8-հոգանոց հանձնաժողով եւ եւս մի 6-հոգանոց հանձնաժողով՝ խմբագրական տվյալների պաշտպանության համար: Բոլոր անդամները հրատարակիչներ եւ լրագրողներ են, պաշտոնավարում են 2 տարի ժամանակով: «Դրսից»՝ ոչ մամուլի աշխարհից, ոչ մի փորձագետ չի ներգրավվում խորհրդի աշխատանքներում:

2006-ին ստացված ռեկորդային՝ 954 բողոքի դիմաց մամուլի խորհուրդը 2007-ին ստացել է 735 բողոք: Բողոքների նվազման պատճառներից մեկն այն էր, որ ի տարբերություն Մուհամեդ մարգարեի ծաղրանկարի դեմ զանգվածային բողոքի ալիքի (միայն այդ գործով 90 բողոք էր ստացվել), 2007-ին ոչ մի կոլեկտիվ բողոք չի եղել: Բացի այդ, մի համալսարան, որ 2006-ին 118 բողոք էր ներկայացրել խորհրդին, 2007-ին ներկայացրել է միայն 33 բողոք: Ընդհանուր առմամբ, 2007-ին խորհրդի բողոքարկման հանձնաժողովները քննել են 328 բողոք, ընդունել 31 հրապարակային եւ 4 ոչ հրապարակային զգուշացումներ:

2008-ին Գերմանական մամուլի խորհուրդը որոշեց զբաղվել նաեւ էլեկտրոնային լրատվամիջոցներով՝ մշակելով Մամուլի վարքականոնի եւ բողոքարկման ընթացակարգի փոփոխություններ, հանդես գալով օրենսդրական նախաձեռնությամբ:

Դանիա

Դանիական մամուլի խորհուրդը կազմված է 8 անդամից եւ 8 փոխարինողներից, նիստեր է գումարում տարեկան մոտ 12 անգամ: Խորհրդի ղեկավարը Սահմանադրական դատարանի դատավոր է, իսկ տեղակալը՝ իրավաբան: Նրանցից մեկնումեկը, ինչպես նաեւ առնվազն մեկ խմբագիր, մեկ լրագրող եւ մեկ ներկայացուցիչ՝ հանրությունից, պարտադիր պետք է ներկա լինեն նիստին: Բացի այդ, խորհուրդն ամբողջ կազմով՝ 16 հոգով, տարեկան երկու լիագումար նիստ է գումարում: Խորհրդին կից գործում է 4-հոգանոց քարտուղարությունը:

Վերջին տարիներին Մամուլի խորհրդին դիմողների թիվը կտրուկ աճել է՝ անցնելով 170-ի սահմանը: Բողոք ներկայացնելու համար եւ ինտերնետային, եւ մյուս հրապարակումների դեպքում, սահմանված է 4 շաբաթ: Օրինակ, 2007-ին ներկայացված 164 դիմումներից 34-ը չեն ընդունվել այդ թվում ուշացած լինելու պատճառով, ինչպես նաեւ՝ որովհետեւ բողոքի առարկա հրապարակումը ուղղակիորեն չի ոտնահարել տվյալ դիմումատուի շահերը: 24 դեպքում խորհուրդը պարտավորեցրել է լրատվամիջոցին հրապարակել նրա վերաբերյալ ընդունած՝ խորհրդի որոշումը: Միջինը 76 օր է պահանջվել խորհրդի որոշումների համար, իսկ խորհրդի նախագահի կողմից մերժումների համար պահանջվել է միջինը 23 օր: Որոշումներ ընդունելիս խորհուրդն առաջնորդվում է «Մամուլի էթիկայի կանոններով»:

Վերջին տարում պահպանվել են նախորդ միտումները՝ Դանիական մամուլի խորհրդին ավելի շատ բողոքում են գաղտնի տեսագրությունների, էլեկտրոնային քննարկումների եւ բլոգերի բովանդակության, հանրային գործչի մասնավոր կյանքին միջամտելու, ինչպես նաեւ մի լրատվամիջոցի պատրաստած ռեպորտաժը կամ հարցազրույցը միեւնույն հոլդինգին պատկանող մեկ այլ լրատվամիջոցում հրապարակելու դեմ:
www.pressenaevnet.dk

Էստոնիա

Էստոնիայի մամուլի խորհուրդը կազմված է 10 հոգուց, որից 6-ը մամուլի ներկայացուցիչներ են, իսկ 4-ը՝ հանրության: Խորհրդի ղեկավարն ընտրվում է մամուլի ներկայացուցիչներից: Խորհուրդը մամուլի մասին հանրային քննարկումներին չի մասնակցում, այլ զբաղվում է միայն այն գործերով, որոնց հետ կապված բողոքներ է ստանում: Ի տարբերություն հանրային լրատվամիջոցների եւ մասնավոր թերթերի, մասնավոր հեռուստաընկերությունները դանդաղ են ներգրավվում խորհրդում, ուստի դրանց դեմ բողոքները չեն ընդունվում: 2008-ին խորհրդին միացել է առաջին մասնավոր հեռուստաընկերությունը եւ անդամակցության առաջին 6 ամսում արդեն 5 բողոք է ստացել:

2003-ից ի վեր ինտերնետային լրատվամիջոցների մեծ մասն անդամակցում է խորհրդի ինքնակարգավորման համակարգին: Նրանց դեմ շատ քիչ բողոքներ են եղել եւ հիմնականում վերաբերվել են ընթերցողական մեկնաբանություններին: Մամուլի խորհուրդն անընդունելի է համարել դրանք հեռացնել ինտերնետից, ինչպես պահանջել են դիմողները:

Վերջին տարում Մամուլի խորհրդին ուղղված բողոքները հիմնականում վերաբերվել են ոչ ճշգրիտ տեղեկություններին, դրանց անհավասարակշ-

ռությանը, մասնավոր սեփականությանը (դրանց լուսանկարների հրապարակմանը), պատասխանի իրավունքին, սատիրայի կիրառմանը եւ այլն:

Խորհուրդը տարեկան 30-40 բողոք է ստանում: 2007-ին ստացված դիմումներից 21-ն են քննարկվել: 14-ի դեպքում խորհուրդը լրագրողական էթիկայի խախտում չի արձանագրել, իսկ 7-ի դեպքում բացասական որոշում է կայացրել:

Իռլանդիա

Իռլանդիայի մամուլի խորհուրդը եւ Մամուլի օմբուդսմանն իրենց գործունեությունն սկսել են 2008-ի սկզբից: Նրանք կարգավորում են տպագիր մամուլին առնչվող հարցեր: Առայժմ կան թերթեր, որոնք դեռ չեն միացել ինքնակարգավորման համակարգին, ուստի նրանց վերաբերող հարցեր դեռեւս չեն քննվում, բայց քայլեր են արվում ավելի շատ լրատվամիջոց ներգրավելու ուղղությամբ:

Մամուլի խորհուրդն ունի 13 անդամ, որից 7-ը հանրության հեղինակավոր ներկայացուցիչներ են, այդ թվում՝ խորհրդի նախագահը, իսկ 6-ը՝ մամուլի աշխարհի ներկայացուցիչներ: Վերջիններիս նշանակում է երեք հեղինակավոր լրագրողական կազմակերպություն: Օմբուդսմանին նշանակում է խորհուրդը:

Մամուլի խորհրդի եւ օմբուդսմանի գրասենյակի աշխատանքն ապահովվում է անդամակցող թերթերի եւ այլ պարբերականների մուծումների շնորհիվ, բայց այս մարմինները անկախ են ե՛ւ ֆինանսավորման աղբյուրներից, ե՛ւ կառավարությունից:

Խորհուրդը նիստեր է գումարում տարեկան 11 անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի շատ: Եվ խորհրդի անդամների, եւ օմբուդսմանի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

Մամուլի օմբուդսմանի հետ աշխատում է նրա անձնական օգնականը, որը նաեւ Մամուլի խորհրդի նախագահի անձնական օգնականն է, եւ «գործերի օգնական», որը պատասխանատու է օմբուդսմանի գրասենյակի միջնորդական եւ հաշտարար գործունեության համար:

Բողոքներն ընդունվում են, եթե բողոքի առարկա հրապարակումն ազդել է անմիջականորեն բողոքողի վրա, եթե բողոքի առարկան վերաբերում է «Գործունեության վարքականոնին», եւ եթե բողոքը ներկայացվել է տվյալ հրապարակումից 3 ամսից ոչ ուշ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ իռլանդացիները հայրենի մամուլի դեմ բողոքում են հատկապես «անբարեխիղճ» կամ «ոչ ճշմարիտ» լուսաբանման եւ մասնավոր կյանքին միջամտելու մեղադրանքներով: Թերթերը, որոնց դեմ է որոշում կայացվել, պարտավոր են հրապարակել որոշումն ամբողջությամբ եւ ըստ պատշաճի:

Բողոքների մեծ մասը քննում է մամուլի օմբուդսմանը, բայց նա կարող է որոշ բողոքներ հանձնարարել խորհրդին: Վերջինիս կայացրած որոշումները բողոքարկման ենթակա չեն, իսկ օմբուդսմանի որոշումները կարող են բողոքարկվել մամուլի խորհրդում:

Ինքնակարգավորման նորաստեղծ մարմնի մասին հանրային իրազեկությունը բարձրացնելու քայլերի հետ մեկտեղ՝ խորհրդի ներկայացուցիչները մասնակցում են «Հանցագործությունը եւ մամուլը», «Ինքնասպանության լուսաբանում» եւ այլ թեմաներով քննարկումների:
www.presscouncil.ie, www.pressombudsman.ie.

Լյուքսեմբուրգ

Լյուքսեմբուրգի մամուլի խորհուրդը հիմնադրվել է 1979-ին խորհրդարանում ընդունված օրենքի արդյունքում, բայց այն առաջին անգամ է կին ղեկավարում: Խորհրդի 42 անդամների կեսը հրատարակիչներ են, կեսը՝ լրագրողներ: Նրանք ընտրվում են հեղինակավոր մասնագիտական կառույցների առաջարկությամբ եւ Մեծ Դուքսի (Լյուքսեմբուրգի միապետի) հրամանագրով:

Նախեւառաջ, Մամուլի խորհուրդը լիազորված է լրագրողական վկայականներ շնորհել եւ նաեւ հետ վերցնել: Դրանով զբաղվում է Մամուլի խորհրդի ղեկավարի գլխավորած 8-հոգանոց խումբը: Եթե այն մերժում է վկայական տալ, լրագրողը կարող է դիմել վարչական դատարան: Վերջերս խորհուրդը հրապարակեց Լյուքսեմբուրգում պաշտոնապես ճանաչված լրագրողների անունը, հասցեն, մասնագիտական ոլորտը մատնանշող տեղեկությունների ալմանախ:

Մամուլի խորհուրդը կազմավորում է գանգատարկման 5-հոգանոց հանձնաժողով, որը բողոքներ է ընդունում եւ իրավաբանական, եւ ֆիզիկական անձանցից: Հանձնաժողովի կազմում են երկու լրագրող եւ երկու հրատարակիչ: Այն գլխավորում է իրավաբան, որը չի զբաղվում մամուլի հետ կապված որեւէ գործունեությամբ եւ ներկայացնում է հանրությունը: Նրան, մամուլի խորհրդի երաշխավորությամբ, նշանակում է Մեծ Դուքսը: Գանգատների հետ կապված որոշումները հրապարակելու հստակ պարտադրանք առայժմ չկա:

Հանձնաժողովին զուգահեռ մամուլի դեմ բողոքներով զբաղվում է նաեւ Տվյալների պաշտպանության ազգային կոմիտեն, որը հիմնադրվել է օրենսդրական ակտով:

Խոսքի ազատության գործերի հետազոտությունների արդյունքում Մամուլի խորհուրդը թողարկում է հանձնարարականներ եւ դիրեկտիվներ, ինչպես նաեւ վերապատրաստում է անցկացնում լրագրողների եւ հրատարակիչների համար:

Լյուքսեմբուրգի մամուլի խորհուրդը նաեւ մշակում է լրագրողական էթիկայի վարքականոն՝ լրագրողների եւ հրատարակիչների իրավունքների եւ պարտականությունների շրջանակը: Այն հանդես է գալիս նաեւ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ: Մասնավորապես, 2004-ին ընդունված՝ Խոսքի ազատության մասին օրենքում ձգտում է օրենքով իրեն վերագրել իրավական պատասխանատվություն, որպեսզի կարողանա տարբեր գործերով դատարան ներկայանալ: Միաժամանակ, Մամուլի խորհուրդը բանակցություններ է վարում խորհրդարանական եւ կառավարական շրջանակների հետ, որ մամուլի խնդիրներն ավելի քիչ ենթակա լինեն օրենսդրական կարգավորման, եւ ավելի շատ՝ էթիկայի վարքականոնին:

Մամուլի խորհուրդը պահանջում էր, որ օրենքով ապահովվի նաեւ հանրային իշխանությունների պահած փաստաթղթերի հասանելիությունը լրագրողների համար: Կառավարությունն, ի պատասխան, պատրաստել է օրենքի նախագիծ, որը նման հասանելիություն է նախատեսում ոչ միայն լրագրողների, այլեւ բոլոր քաղաքացիների համար:

Կիպրոս

Կիպրոսի մամուլի բողոքարկման հանձնաժողովը (ԿՄԲՀ) հիմնադրվել է 1997-ին՝ Կիպրոսի լրագրողների միության, Հրատարակիչների ընկերակցության եւ Էլեկտրոնային մամուլի սեփականատերերի կողմից:

Այն որպես միջնորդ՝ արբիտր է ընդունվում լրատվամիջոցների մեծամասնության կողմից: Տարեկան այն ստանում է 35-40 դիմում, իսկ 2008-ին (հոկտեմբերի դրությամբ)՝ 25: Բողոքների մեծամասնությունը վերաբերվում է անբարեխիղճ լրատվությանը եւ պատասխանելու իրավունքին:

ԿՄԲՀ-ի իրավասությունը տարածվում է եւ էլեկտրոնային, եւ տպագիր մամուլի վրա: Ավելին. այն գրեթե վետոյի իրավունք ունի հեռարձակող լրատվամիջոցներին լիցենզավորող՝ Ռադիոյի եւ հեռուստատեսության հանձնաժողովի (ՌՀՀ) վրա, երբ այն քննում է «Գործունեության վարքականոնին» առնչվող հարցեր: Բանն այն է, որ Ռադիոյի եւ հեռուստատեսության մասին օրենքի համաձայն, ՌՀՀ-ն կարող է քննության առնել ի՛ր «Գործունեության վարքականոնի» (շատ նման է ԿՄԲՀ վարքականոնին) խախտման մասին բողոքները, այն էլ միայն այն դեպքում, եթե գրավոր դիմում է ստացել ԿՄԲՀ-ից: Դեմ լինելով լրատվամիջոցների դեմ պատիժների կիրառման՝ ԿՄԲՀ-ն ՌՀՀ-ին ոչ մի անգամ չի դիմել նման հարցերով: Վերջերս երկրի Գերագույն դատարանը չեղյալ համարեց ՌՀՀ ընդունած որոշումն այն պատճառով, որ ՌՀՀ-ն գործել էր առանց ԿՄԲՀ-ի գրավոր դիմումի:

2008-ին հանձնաժողովը՝ հիմնադիրների համաձայնությամբ, փոփոխություններ արեց իր «Գործունեության վարքականոնում», որն ընկած է հանձնաժողովի գործունեության հիմքում: Այդ փոփոխություններով վարքականոնի լեզուն ավելի է հստակեցվում՝ հասարակությանը հասանելի դարձնելու համար: Բացի այդ, դրանք նպատակ ունեն պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի իրավունքը, երեխաների իրավունքները եւ սեռական ոտնձգությունների եւ ընտանեկան բռնությունների ենթարկված մարդկանց իրավունքները:

Վարքականոնում ներմուծվել է երկու նոր կետ: Դրանցից մեկը արգելում է լուրեր հրապարակել ինքնասպանությունների, առավել եւս՝ դրանց մանրամասների եւ միջոցների մասին: Իսկ արտառոց դեպքերում հրապարակումը պետք է հատուկ նրբանկատություն եւ զգուշություն ցուցաբերի: Այս սահմանափակումը չի տարածվում ինքնասպանությունների գործով դատավարությունների լուսաբանման վրա:

Հաջորդ նորամուծությունը արգելում է լրատվամիջոցին պատկերը ձեւափոխել՝ առանց հանրությանը բացատրելու դրա պատճառների մասին, բացի այն դեպքերից, երբ պատճառն ակնհայտ է, ասենք՝ սատիրա է:

Կոսովո

Կոսովոյի մամուլի խորհուրդը ինքնակարգավորման տանիքի ներքո համախմբում է Կոսովոյի տպագիր մամուլը՝ հենվելով «Մամուլի վարքականոնի» վրա: Այն հիմնադրվել է 2005-ին՝ Կոսովոյում ԵԱՀԿ առաքելության աջակցությամբ:

Խորհրդի 13 անդամները ներկայացնում են երկրի բոլոր թերթերը՝ գլխավոր խմբագիրների մակարդակով, մի քանի այլ պարբերականներ: Անդամ-

ներից երեքն ընտրովի են եւ անկախ. հենց նրանք էլ կազմում են խորհրդի ղեկավարությունը (նախագահ եւ տեղակալներ): Խորհրդի նախագահի տեղակալներից մեկը միաժամանակ Կոսովոյի սերբական համայնքի ներկայացուցիչ է: Վարչության նիստերը եռալեզու են՝ ապահովելու Կոսովոյի ազգային փոքրամասնությունների հավասարությունը: Վարչության անդամները տարեկան անդամավճար են մուծում խորհրդին, թեեւ նրանցից ոմանք դժվարանում են դա անել: Խորհրդի գործերի վարումը վստահված է երկհոգանոց քարտուղարությանը:

2008-ի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում մամուլի խորհուրդը ստացել է 17 բողոք, որից 14-ի կապակցությամբ որոշում է կայացրել: Դրա համար նա ստիպված է եղել պրոֆեսիոնալ իրավաբան վարձել: Իր գործունեության ընթացքում Կոսովոյի մամուլի խորհուրդն ապավինում է նաեւ եվրոպական առաջավոր փորձին: Նրա գործը հեշտացնում է նոր օրենսդրությունը, որով վարկաբեկման եւ վիրավորանքի մասին հոդվածներն ապաքրեականացվել են:

Բողոքները մեծմասամբ վերաբերվել են անձնական կյանքի իրավունքին, ատելության քարոզչությանը, փոքրամասնությունների իրավունքներին, վարկաբեկմանը եւ այլն: Ընդհանրապես, 2008-ի փետրվարի 17-ին անկախություն հռչակած՝ հետպատերազմական Կոսովոյում մարտահրավեր է մնում այնպիսի մամուլի կայացումը, որը հեռու է էթնիկ անհանդուրժողականությունից, ինչը շատ լրագրողներ «հայրենասիրություն» են կոչում: Նման դեպքերի պատճառով մամուլի խորհրդի երկու անդամներ զրկվել են իրենց դիրքից: Խորհուրդն իր պարտքն է համարում զարգացնել «պատասխանատու մամուլ»:

Մասնագիտական եւ հանրային ճանաչողության բարձրացման նպատակով Կոսովոյի մամուլի խորհուրդը բազմաթիվ բաց քննարկումներ է կազմակերպում, այդ թվում՝ հեռուստատեսային: Պրիշտինայում 2008-ին կայացած աշխատանքային հանդիպման արդյունքում բարեփոխվեցին խորհրդի կանոնադրությունն ու «Մամուլի վարքականոնը»: Իր վեբ-կայքում խորհուրդը հրապարակում է խմբագրական եւ մասնագիտական ուղեցույցեր՝ փոքրամասնությունների, օն-լայն հրապարակումների կարգավիճակի եւ այլ թեմաներով:

www.presscouncil-ks.org

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում մամուլի ինքնակարգավորմամբ նախկինում զբաղվում էր 1953-ին հիմնադրված՝ Մամուլի խորհուրդը: Այս մարմնի հիմնական գործառույթը լրագրողական էթիկայի չափանիշների մշակումն էր եւ աջակցությունը մամուլի ազատությանը: 1990-ին, կառավարության միջամտությունից խուսափելով, բրիտանական մամուլը ստեղծեց նոր ինքնակարգավորման մարմին, որը փոխարինեց Մամուլի խորհրդին:

Այն այժմ կոչվում է Մամուլի բողոքարկման հանձնաժողով (ՄԲՀ): Հանձնաժողովի մեծամասնություն են կազմում հանրության հեղինակավոր ներկայացուցիչները: Հրատարակիչներն ու խմբագիրները ձեւավորեցին Մամուլի չափանիշների ֆինանսավորման խորհուրդ եւ ստանձնեցին հանձնաժողովի ֆինանսավորումը, իսկ տեղական եւ մարզային խմբագիրների մի հանձնախումբ ՄԲՀ-ի համար «Գործունեության վարքականոն» գրեց:

2008-ի առաջին 10 ամիսներին հանձնաժողովն ստացել է 3257 բողոք, իսկ 2007-ին՝ 4340 բողոք, որոնց մեծամասնությունը վերաբերվում է անբարեխիղճ լուսաբանմանը: Ընդհանուր առմամբ լուծվել է 1227 գանգատ՝ միջնորդությամբ կամ այլ եղանակով: 32 բողոքի կապակցությամբ որոշում է կայացվել, եւ բոլորը, որոնք քննադատական են եղել մամուլի համար, հրապարակվել են տվյալ լրատվամիջոցում՝ այնպես, ինչպես բողոքի առարկա հրապարակումը:

Հանձնաժողովն իր հիմնական գործառույթ է համարում միջնորդությունը: Այդ եղանակով են կարգավորվել վարքականոնի խախտում ենթադրող բողոքների 74 տոկոսը: Գանգատների լուծման մյուս եղանակներից են հրապարակային ներողությունը, հրապարակային ուղղումը, բողոքողի նամակի հրապարակումը, մասնավոր հանձնառությունը՝ հետագա լուսաբանումների վերաբերյալ, ինտերնետային արխիվների շտկումը:

2008-ին հանձնաժողովն անդրադարձել է տպագիր պարբերականների ինտերնետային բովանդակությանը՝ պահանջելով, որպեսզի խմբագիրները նույնքան բարձր մասնագիտական չափանիշներ սահմանեն նաեւ ինտերնետային տարբերակի համար, որտեղ երբեմն հայտնվում են վիճարկելի վիդեո եւ աուդիո նյութեր: Հանձնաժողովը բացասական պատասխան է տվել «Հարրի Փոթթերի» հեղինակ Ջ. Ռոուլինգի դիմումին: Մամուլը հրապարակել էր Շոտլանդիայում գտնվող՝ նրա տան լուսանկարը, ինչը գրողին ստիպել էր անհանգստանալ իր անդորրի համար: Հանձնաժողովը գտել է, որ մամուլը չի խախտել ոչ մի վարքականոն, առավել եւս, որ այդ տեղեկություններն ու տան պատկերը մինչ այդ էլ հասանելի էին ինտերնետում: Ներկայում հանձնաժողովը ներգրավված է ինքնասպանությունների լուսաբանման շուրջ մի լայն բանավեճում, որը սկիզբ է առել Հարավային Ուելսում կատարված մի շարք ինքնասպանություններից հետո:

Անգլիական ինքնակարգավորման նոր մարտահրավերներից է նաեւ ավանդական լրագրության եւ մասնավոր ինտերնետային աղբյուրների (ինչպես բլոգերն ու անձնական էջերը Facebook-ում, MySpace-ում եւ այլուր) փոխհարաբերությունը, վերջիններիս բովանդակության անարգել տարածումը ավանդական մամուլում:

Կեսդարյա պատմության ընթացքում բրիտանական մամուլի ինքնակարգավորման մարմինը 30000-ից ավելի գործի քննություն է ստանձնել: Երկրի բոլոր տպագիր լրատվամիջոցները միացել են «Գործունեության վարքականոնին», եւ գրեթե բոլոր լրատվամիջոցներում խմբագիրների աշխատանքային պայմանագրերում արձանագրված է հավատարմություն վարքականոնի սկզբունքներին: Դա զգալիորեն հեշտացնում է Հանձնաժողովի գործը:

Վարքականոնը հատուկ պաշտպանություն է սահմանում երեխաների, դատապարտվածների ընտանիքների, սեռական բռնության զոհերի եւ բուժում անցնող հիվանդների համար: Այն հատուկ կանոններ է սահմանում նաեւ ռասայական, կրոնական, սեռային եւ այլ տեսակի խտրականության դեմ: 1997-ին ընդունած ուղեցույցն արգելում է պատկերել հոգեկան հիվանդներին:

www.pcc.org.uk

Մոնտենեգրո

Մոնտենեգրոյի լրագրողական ինքնակարգավորման մարմինը (ՄԼԻՄ) հիմնադրվել է 2003-ին: Այն իր գործունեության ընթացքում ուղղորդվում է 2002-ին ստորագրված «Մոնտենեգրոյի լրագրողական վարքականոնով»: ՄԼԻՄ մամուլի խորհրդի անդամները լրագրողական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ են:

4 օրաթերթ, 18 հեռուստաընկերություն եւ 41 ռադիոկայան ունեցող երկրում ինքնակարգավորման մարմինը բավարարված չէ լրատվամիջոցների ներգրավվածության աստիճանով, ինչը պայմանավորված է նրանց հակամետ դիրքորոշումներով: Ազդեցիկ լրատվամիջոցներից երկուսը խուսափում են միանալ ՄԼԻՄ-ին, սակայն վերջինս շարունակում է քննադատության ենթարկել նրանց:

2008-ի սկզբին մարմինը փոփոխության ենթարկեց իր կանոնադրությունը եւ մտադիր է լրամշակել նաեւ լրագրողական վարքականոնը: Մամուլի խորհրդի նորանշանակ անդամները մշտական մոնիտորինգի են ենթարկում մամուլը, քննում առանձին գործեր եւ էթիկայի վարքականոնի խախտման դեպքերի մասին զգուշացնում խմբագրություններին եւ լրագրողներին: Ուշագրավ է, որ վերջիններս նույնպես սկսել են դիմել ՄԼԻՄ-ին:

Այդ խախտումներն առավելապես վերաբերվում են դժբախտ դեպքերի կամ բռնությունների մանրամասն նկարագրությանը եւ/կամ ցուցադրությանը, հանցագործության մեջ կասկածվող անձանց ազգային ծագման հիշատակմանը, չափահասների համար նախատեսված հեռուստաշոուներին երեխաների մասնակցությանը, սեռական բնույթի կոպիտ բառապաշարի օգտագործմանը եւ այլն:

Մոնիտորինգի արդյունքների եւ քննված գործերի վերլուծությունն ամփոփվում է զեկույցներում եւ հրապարակվում տարեկան 4-5 անգամ: 2008-ին այդպիսի 4 զեկույց է հրապարակվել:

Մշտական մոնիտորինգի գաղափարը ծագել է 2006-ի մայիսի՝ Մոնտենեգրոյի անկախության հանրաքվեի առթիվ: Այդ շրջանում դիտարկված առավել ազդեցիկ մամուլում քիչ չէին էթիկայի լրջագույն խախտումները՝ ատելության քարոզ, կրոնական եւ ազգային անհանդուրժողականության տարածում, կեղծ տեղեկատվություն: Մամուլի խորհուրդը պրոակտիվ դիրքորոշում որդեգրելով՝ ինքն էր դիմում խմբագիրներին՝ հորդորելով ձեռնպահ մնալ նման հրապարակումներից եւ խրախուսում պատասխանատու լրատվություն:

Ինքնակարգավորման գաղափարի եւ պրակտիկայի արմատավորման նպատակով ՄԼԻՄ-ը նախատեսում է հանրային իրազեկման լայն արշավ: Վերջերս համագործակցություն է հաստատել Մոնտենեգրոյի օմբուդսմանի եւ իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաեւ Մոնտենեգրոյի մամուլի ինստիտուտի հետ:

ՄԼԻՄ-ի գործունեությունը հնարավոր է դարձել միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման շնորհիվ, իսկ իրենք՝ լրատվամիջոցներն, առայժմ չեն շտապում համալրել կազմակերպության գանձանակը:

Նիդեռլանդներ

Նիդեռլանդների մամուլի խորհուրդը գործում է 1948-ից, վերափոխման է ենթարկվել 1960-ին՝ ընդլայնելով իրավասությունների շրջանակը: Ներկայում նրա հիմնադիր է համարվում մի հիմնադրամ, որին անդամակցում են երկրի կարեւորագույն լրագրողական կազմակերպությունները: 2005-ին նրանց է միացել նաեւ առաջին ինտերնետայի՛ն կազմակերպությունը:

Հիմնադրամի խորհուրդն է նշանակում մամուլի խորհրդի 26 անդամներին (մամուլի 13 եւ հանրության 13 ներկայացուցիչ), 4 նախագահներին եւ 2 քարտուղարներին: Խորհրդի անդամներն աշխատում են իրենց հիմնական աշխատանքից ազատ ժամանակ: Նախագահը եւ տեղակալները դատական ատյանների ներկայացուցիչներ են: Քարտուղարներն իրավաբաններ են: Հանրության ներկայացուցիչները նույնպես ինչ-որ կերպ առնչվում են մամուլին՝ ասենք, լրագրության պրոֆեսոր են կամ մի լրատվամիջոցում ոչ-լրագրողական պաշտոն են զբաղեցնում:

Որոշումներ կայացնելիս խորհուրդը հենվում է նաեւ Լրագրողների միջազգային դաշինքի վարքականոնի (Բորդո, 1954/ Հելսինկի 1986) եւ Գլխավոր խմբագիրների հոլանդական համայնքի՝ 1995-ին կազմած «Հոլանդական լրագրողների վարքականոնի» վրա:

2008-ին առաջին անգամ խորհուրդն ուղեցույց հրապարակեց ինտերնետային հրապարակումների համար: Դրանից մեկ տարի առաջ նա թարմացրել էր ուղեցույցը՝ ընդհանրապես մասնագիտական գործունեության ընթացքում լրագրողի վարքի մասին: Առհասարակ խորհուրդը տարին մեկ անգամ քննարկում է ուղեցույցը վերանայելու անհրաժեշտության հարցը:

2007-ին նիդեռլանդական խորհուրդն ստացել է 80 բողոք՝ ավելի քիչ, քան նախորդ տարում: Դրա պատճառը մարզային թերթերի դեմ ներկայացված բողոքների քանակի նվազումն է: Խորհուրդն ընդունել է 84 բողոք 54 տարբեր լրատվամիջոցների առնչությամբ: Այդ որոշումներից 40-ը մասամբ կամ լրիվ բավարարել են դիմումը, իսկ 38-ը՝ մերժել:

Վերջին տարիներին մամուլի խորհուրդն ամենից շատ բողոքներ ստանում է քաղաքացիների մասնավոր կյանքին լրագրողական միջամտության մասին: Մեծ թիվ են կազմում նաեւ բողոքողները, ովքեր համարում են, որ մամուլի այս կամ այն հրապարակումը չափազանց քննադատական է գտնվել իր նկատմամբ՝ դրա համար չունենալով բավարար հիմնավորում եւ իր՝ քննադատության ենթարկված բողոքողի տեսակետը:

Նիդեռլանդներում հնչեղություն ստացած՝ ընտանեկան դրամաների հետ կապված հրապարակումների մասին գործեր քննելիս մամուլի խորհուրդը եկել է եզրակացության, որ լրագրողն ու խմբագիրն ազատ են իրենց թեման ընտրելիս, բայց պետք է հնարավորինս շատ մանրամասներ ներկայացնեն, որպեսզի պատկերն ամբողջական լինի եւ երկիմաստություններ չլինեն, իսկ նյութի հերոսների անձնական կյանքին անդրադառնա այն նվազագույն չափով, որն անհրաժեշտ է թեմայի լուսաբանման համար: Մյուս կողմից մամուլի խորհուրդը միանգամայն անընդունելի է համարել հանցավոր բռնության մանրամասներ հրապարակել, ինչը տառապանք կպատճառի զոհին եւ/կամ նրա հարազատներին: Առավել եւս մերժելի է համարվել ինքնասպանության զոհերի լրիվ անունը եւ/կամ ճանաչելի լուսանկարը հրապարակել:

1993-ից ի վեր մամուլի խորհուրդն զբաղվում է նաեւ միջնորդությամբ՝ հաշտեցնելով կողմերին: Նույն ժամանակվանից նա իրավունք է ստանձնել նաեւ հանդես գալ սեփական նախաձեռնությամբ, երբ դիտարկում է վարքականոնի խախտում: Այս ընթացքում այդպիսի միայն 3 դեպք է եղել, որոնք վերաբերվում էին «գողացված» տեղեկության հրապարակմանը, թաքնված տեսախցիկի կիրառմանը եւ էմբարգոյին:

2005-ից ի վեր, բողոքների քննության գործընթացն արագացնելու համար, մամուլի խորհուրդը ներգրավում է ազատ ծառայողների, ովքեր ձեւակերպում են որոշումների նախագծերը: Նրանց ֆինանսավորման համար 2007-ին խորհուրդն աջակցություն է ստացել տեղական «Դեմոկրատիայի եւ լրագրության» հիմնադրամից:

Նիդեռլանդների մամուլի խորհուրդը 2007-2008թթ. մի լայնածավալ հետազոտություն է կատարել՝ համեմատելով Եվրոպայի մի քանի երկրների (Բելգիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Գերմանիա եւ Դանիա) փորձը՝ մամուլի ինքնակարգավորման գործում:
www.rvdj.nl

Նորվեգիա

Նորվեգական մամուլի բողոքարկման հանձնաժողովը հիմնվել է 1995-ին: Այն զբաղվում է բոլոր տեսակի՝ տպագիր, հեռարձակող եւ օն-լայն լրատվամիջոցների դեմ բողոքներով: Դրանց գերակշիռ մեծամասնությունն, այնուամենայնիվ, տպագիր մամուլի դեմ է: Բողոքներն ընդունվում են համապատասխան հրապարակումից հետո երեք ամսից ոչ ուշ:

2007-ին բողոքարկման հանձնաժողովը ստացել է բողոքների ամենամեծ քանակը՝ 314: Մինչ այդ ռեկորդային էր համարվում 2004-ի ցուցանիշը՝ 267: Այդ բողոքների մեծ մասը վերաբերվում է գործունեության վարքականոնի այնպիսի խախտումների, ինչպիսիք են փաստային բնույթի մեղադրանքներին անմիջապես պատասխանելու իրավունքը, նյութի բովանդակության ազնիվ եւ բարեխիղճ մատուցումը, աղբյուրների ճիշտ ընտրությունն ու տեղեկատվության հավաստիությունը:

2007-ին ստացված բողոքներից 81-ը բավարարվել են, 40-ը հետ են վերցվել կամ կարգավորվել ջենթլմենաբար, 66-ը կարգավորվել են պարզեցված ընթացակարգով, քանի որ լրագրողական վարքականոնի խախտում չի արձանագրվել: Մնացած դիմումները կամ ժամկետանց էին, կամ չէին վերաբերում հանձնաժողովի իրավասության ոլորտին:

Բողոքների մոտ 20 տոկոսը հանձնաժողովին ուղղում են իրավաբանները՝ իրենց կամ ավելի շատ՝ հաճախորդի անունից: Նման գործերի քննությունը հիմնականում երկար է տեւում, ուստիեւ՝ թանկ նստում հաճախորդի վրա, սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ նման գործերից քչերն են լուծվում դիմողի օգտին:

2007-ին միանգամից 5 միլիոնատեր են դիմել բողոքարկման հանձնաժողով եւ 5-ի գործերն էլ նրանց օգտին են լուծվել: Սակայն պատճառը ոչ թե դիմողների կարողությունն է, այլ իրավացիությունը. լրագրողները հիմնականում ոչ ճշմարտացի տեղեկություններ էին հաղորդել նրանց անձնական կյանքի եւ գործերի մասին:

Հանձնաժողովը կազմված է 7 հոգուց, որից 2-ը լրագրող են, 2-ը խմբագիր, մյուս 3-ը՝ հանրության ներկայացուցիչներ: Նրանց բոլորին ընտրում է

Նորվեգական մամուլի ընկերակցության խորհուրդը: Խմբագիրներին նշանակում է Նորվեգական խմբագիրների ընկերակցությունը, իսկ լրագրողներին՝ Նորվեգական լրագրողների ընկերակցությունը: Հանրության ներկայացուցիչներին ընտրում է Նորվեգական մամուլի ընկերակցության գլխավոր քարտուղարը:

Հանձնաժողովի անդամներն ունեն իրենց փոխարինողները, որոնց թիվը 2008-ի կեսին հասցվեց 10-ի, որպեսզի հանձնաժողովի անդամներից մի քանիսի բացակայության դեպքում նիստը չհետաձգվի: Նրանք հաճախ են բացակայում, քանի որ զբաղված են իրենց հիմնական աշխատանքով, իսկ տարեկան առնվազն 11 անգամ գումարվող ամեն նիստի տեւողությունը 6 ժամ է:

Հանձնաժողովի այսպիսի կազմն ապահովում է նորվեգական մամուլի ներկայացուցչականությունը. նախկինում մամուլի խորհուրդն արժանացել էր քննադատության՝ իր կազմում մեծապես մայրաքաղաքային խոշոր լրատվամիջոցների ներկայացուցիչներ ունենալու պատճառով: Այս կազմն ապահովում է նաեւ կանանց լայն մասնակցությունը. կին են հանձնաժողովի 7 անդամից 4-ը, 10 փոխարինողից 7-ը:

Մամուլի ներկայացուցիչներն իրենց աշխատանքի համար չեն վճարվում, իսկ հանրության ներկայացուցիչները ստանում են 1500 կրոն (մոտ 185 եվրո):

«Նորվեգական մամուլի գործունեության վարքականոնը» փոփոխության է ենթարկվել ըստ անհրաժեշտության 1994, 2001 եւ 2005թթ.: Վերջին փոփոխությամբ կցված հավելվածն արգելում է մամուլին խոշոր գումարներ վճարել տեղեկության աղբյուրին:

Շվեդիա

Շվեդական մամուլի խորհուրդն ամենահինն է մամուլի ինքնակարգավորման աշխարհում. այն հիմնադրվել է 1916թ.-ին: Նրա անկախ գործունեությունը ֆինանսավորում են լրագրողական չորս կազմակերպություն՝ Շվեդական թերթերի հրատարակիչների ընկերակցությունը, Ամսագիր հրատարակողների ընկերակցությունը, Լրագրողների շվեդական միությունը եւ Ազգային մամուլի ակումբը: Նրանք պատասխանատու են նաեւ «Շվեդիայի մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության էթիկայի վարքականոնի» համար, որը մամուլի խորհրդի հիմնական ուղեցույցն է:

Մամուլի խորհրդի նախագահը դատավոր է: Անդամներից 4-ը վերոհիշյալ կազմակերպություններից են, իսկ հանրության ներկայացուցիչները ոչ մի կապ չունեն ոչ թերթերի բիզնեսի, ոչ էլ որեւէ լրագրողական կազմակերպության հետ:

1969-ին Շվեդիայում հիմնադրվեց նաեւ Մամուլի օմբուդսմանի ինստիտուտը: Օմբուդսմանին նշանակում է հատուկ հանձնաժողովը, որի կազմում երեք հոգի են՝ ավագ խորհրդարանական օմբուդսմանը, Շվեդական իրավաբանների ընկերակցության եւ Ազգային մամուլի ակումբի նախագահները: Առաջինը նա է քննում լրագրողական էթիկայի խախտման դեպքերը: Այստեղ նա իրավասու է հանդես գալ նաեւ սեփական նախաձեռնությամբ:

Բողոքներն ընդունվում են բողոքարկվող հրապարակման օրվանից հետո երեք ամսից ոչ ուշ: Նախ, մամուլի օմբուդսմանը փորձում է տվյալ

խմբագրությունից պարզել, թե խնդիրը հնարավո՞ր է կարգավորել դիմումատուի հերքումը հրապարակելով: Եթե ոչ, նոր միայն քննում է գործը: Օմբուդսմանը կարող է միայն երկու եզրակացություն կայացնել՝ կամ տվյալ լրատվամիջոցը արժանի չէ պաշտոնական քննադատության, կամ՝ ձեռք բերված ապացույցները բավական ծանրակշիռ են՝ մամուլի խորհրդի որոշմանն արժանանալու համար: Դիմողը կարող է նրա եզրակացությունը բողոքարկել մամուլի խորհրդում: Վերջինիս քննադատական որոշումները լրատվամիջոցները պետք է հրապարակեն, ինչպես նաեւ՝ վարչական տույժ վճարեն:

Վերջին տարիներին շվեդական ինքնակարգավորողները տարեկան 350-400 բողոք են ստանում: Դրանց մեծ մասը վերաբերվում է հանցագործությունների լուսաբանմանը եւ անձնական կյանքին լրագրողական միջամտությանը: Բողոքների 30 տոկոսը դիտարկել է մամուլի խորհուրդը՝ կամ մամուլի օմբուդսմանի խնդրանքով, կամ դիմումատուի, որին մերժել է օմբուդսմանը: 10-15 տոկոս դեպքերում մամուլի խորհուրդը քննադատական որոշում է կայացրել լրագրողների նկատմամբ: Մնացած դեպքերում գործերը «կարճվել» են՝ լրատվամիջոցի դրական արձագանքի, դիմումի ժամկետանց լինելու եւ այլ նման պատճառներով:

Շվեդական մամուլի խորհրդի եւ օմբուդսմանի առջեւ ծառացած վերջին մարտահրավերներից են բռնությունների զոհերի եւ դիակների լուսանկարների հրապարակումը, բլոգերների բրուտալ լեզուն, զոհերի անձնական կյանքի մանրամասների հրապարակումը եւ այլն:

Շվեյցարիա

Շվեյցարիայի մամուլի խորհուրդը մոտ 100 տարվա պատմություն ունի: Հոգաբարձուների խորհրդի 21 անդամներից 15-ը պրոֆեսիոնալ լրագրողներ են, իսկ 6-ը՝ հանրության ներկայացուցիչներ:

Մամուլի խորհրդին աջակցում են Լրագրողների միությունը եւ Գլխավոր խմբագիրների ընկերակցությունը, իսկ 2008-ի կեսերից՝ նաեւ Լրագրային խմբագիրների ընկերակցությունը եւ Շվեյցարական (հանրային) հեռարձակողը:

Խորհրդի գործունեությունը հիմնվում է «Լրագրողների պարտականությունների եւ իրավունքների հռչակագրի» վրա, որն էլ համարվում է խորհրդի վարքականոնը:

2008-ի փոփոխություններով այն պահանջում է, որպեսզի համապատասխան լրատվամիջոցը, թեկուզ համառոտակի, հրապարակի իր վերաբերմամբ կայացրած որոշում-հայտարարությունը: Վարքականոնի փոփոխությունները հստակեցնում են բողոքարկման ընթացակարգը, հստակեցնում են նաեւ հեղինակային եւ գովազդային նյութերի տարբերակումը:

Վերջին տարիներին բողոքների քանակական միտումները պահպանվում են, իսկ բովանդակությունը հիմնականում վերաբերվում է անբարեխղճությանը, մասնավոր կյանքին եւ ինքնության անորոշ նույնականացմանը: 2007-ին 63 գործի առնչությամբ որոշում է կայացվել եւ հրապարակվել, 25 բողոք ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարվել է:

2008-ին Շվեյցարական մամուլի խորհուրդը բախվեց մի կարեւոր խնդրի, որ հասարակական բարձր հնչեղություն էր ստացել, եւ ստիպված էր ոչ պոպուլյար որոշում կայացնել այն մասին, որ մամուլի թեմաների մեջ

վաղեմության ժամկետ չի կարող լինել, մանավանդ, եթե դրանք անցյալի իրողությունը կապում են ներկայի հետ, այլապես հանրային գործիչներն ընդհանրապես դուրս կմնան լուսաբանումից: Մամուլը բազմաթիվ հրապարակումներ էր արել հոգեւոր ծառայության վերադարձած մի հոգեւորականի մասին, որն ի վերջո ինքնասպանություն գործեց: Բանն այն է, որ 2000թ.-ին նա մեղադրվել է 1980-ականներին՝ երեխաների նկատմամբ կատարված սեռական ոտնձգությունների համար, գործը կարճվել էր, բայց նա զրկվել էր աշխատանքից: Ինքնասպանությունից առաջ հոգեւորականը մեղադրել էր մամուլին՝ իր նկատմամբ ճնշման համար:

Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի մամուլի ինքնակարգավորման մարմինը ներկայում կոչվում է «Մամուլի բողոքարկման հանրային կոլեգիա» (ՄԲՀԿ): Այն հիմնադրվել է 2005-ին՝ համերկրային լրագրողական եւ ոչ լրագրողական 80 կազմակերպությունների համաձայնությամբ: Դրանց թվում է նաեւ «Մեծ Ժյուրին», որը 1998-ին հիմնադրվել է Ռուսաստանի ժուռնալիստների միության կողմից եւ որը արբիտրի դեր է կատարում մամուլի ներքին հարցերում: Հենց «Մեծ ժյուրին» է եղել կոլեգիայի ստեղծման նախաձեռնողը:

Իր գործունեության ընթացքում հանրային կոլեգիան որպես իրավական հիմք է ընդունում Լրագրողների միջազգային ֆեդերացիայի (IFJ) «Հռչակագիրը՝ լրագրողների վարվեցողության սկզբունքների մասին», ինչպես նաեւ «Ռուսաստանցի լրագրողների էթիկայի վարքականոնը» (1994), «Հեռարձակողների խարտիան» (1999) եւ ոլորտի այլ հիմնարար փաստաթղթեր:

Հանրային կոլեգիան տարեկան ստանում է շուրջ 20 գրավոր բողոք: Դրանց մեծամասնությունը վերաբերվում է հավակնոտ եւ անհավասարակշիռ լուսաբանմանը, հատկապես՝ պատասխանը չհրապարակելուն: Աճում է նաեւ վարկաբեկման հետ կապված բողոքների թիվը: Դիմումների հեղինակները հիմնականում հանրային դեմքեր են, խոշոր կորպորացիաներ, տարբեր հասարակական կազմակերպություններ եւ անհատներ: Բողոքների 50 տոկոսից ավելին ուղղված է մետրոպոլիաների տպագիր մամուլի, ինտերնետային լրատվամիջոցների եւ ազգային հեռուստաալիքների դեմ:

Բողոքողները պետք է պարտավորվեն, որ տվյալ գործով դատարան չեն դիմի, բայց հաճախ այդ բարոյական նորմը խախտում են, ինչպես, օրինակ, «Ճշմարտության պահը» հաղորդաշարի վարող Անդրեյ Կարաուլովը: Առայժմ Ռուսաստանում մամուլի դեմ բողոքների գերակշռող մասը ներկայացվում է դատարան, որտեղ գործերը քննվում են ե՛ւ ըստ քաղաքացիական, ե՛ւ ըստ քրեական օրենսգրքի:

Բողոքների վիճակագրությունը պարբերաբար հրապարակվում է հանրային կոլեգիայի վեբ-կայքում: Մամուլի դեմ կոլեգիայի կիրառած պատժամիջոցների թվում են վարքականոնի խախտման «հրապարակային մերկացումը», միջազգային վկայականից զրկումը եւ այլն:

ՌԴ Մամուլի բողոքարկման հանրային կոլեգիան բաղկացած է երկու պալատից՝ «Մամուլ-Հանրություն» պալատ (լրագրողների, հրատարակիչների, հեռարձակողների, գովազդային գործակալությունների եւ այլ հարակից կազմակերպությունների ներկայացուցիչներ) եւ «Մամուլ-Լսարան» պալատ (Դատավորների խորհրդի, Փաստաբանների պալատի, ՌԴ հան-

ռային պալատի, արհմիությունների, քաղաքական կուսակցությունների, կրոնական եւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ):

«Մամուլ-Լսարան» պալատի նախագահն է ՌԴ Սահմանադրական դատարանի նախկին նախագահ, Եվրադատարանի դատավոր Վլադիմիր Տումանովը, իսկ «Մամուլ-Հանրություն» պալատը գլխավորում է Մամուլի հարցերով նախկին նախարար, ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ, դեսպան Միխաիլ Ֆեդոտովը: Վերջինս նաեւ Ժուռնալիստների միության «Մեծ ժյուրիի» համանախագահն է (մյուս համանախագահը Միխաիլ Նենաշեւն է):

Ինչ վերաբերվում է «Մեծ ժյուրիին», ապա այն կազմավորում են դրա համանախագահները՝ լրագրողական առաջատար կազմակերպությունների, հատկապես՝ Ժուռնալիստների միության առաջարկությամբ: Նրան կարող է դիմել ցանկացած լրագրող կամ ՌԺՄ այլ անդամ՝ բողոքելով որեւէ այլ լրագրողի կամ մամուլի աշխարհի այլ ներկայացուցչի դեմ: Գործի քննությունից առաջ կողմերը համաձայնություն են ստորագրում, որ ամբողջությամբ ճանաչում են Մեծ ժյուրիի իրավազորությունը եւ վերահաստատում են իրենց դիրքորոշումը: Ժյուրին որոշում կայացնում է՝ հիմնվելով ՌԴ մամուլի օրենքի, Լրագրողական էթիկայի վարքականոնի, IFJ-ի վերոհիշյալ հռչակագրի եւ այլ միջազգային սկզբունքների վրա: 1998-ից ի վեր Մեծ ժյուրին քննել է շուրջ 40 գործ:

Մեծ ժյուրիի իրավազորությունը ճանաչել եւ նրա հետ համագործակցության համաձայնագրեր են կնքել Ռուսաստանի առաջատար մամուլի ղեկավարներ, նահանգապետեր, օրենսդրական մարմինների ղեկավարներ, հայտնի քաղաքական գործիչներ եւ լրագրողներ, մարզային եւ տեղական լրագրողական կազմակերպությունների ղեկավարներ:
www.presscouncil.ru, www.ruj.ru

Ֆինլանդիա

Քառասնամյա պատմությամբ՝ Ֆինլանդիայի զանգվածային լրատվամիջոցների խորհուրդն առաջին անգամ գլխավորում է մեկը, ով պրոֆեսիոնալ լրագրող է: Մինչ այդ այն գլխավորում էին բարձր որակավորում ունեցող իրավաբաններ: Նոր նախագահը լիազորվել է ազատորեն հրապարակային մեկնաբանություններ անել մամուլին առնչվող հարցերում: Նա կարող է նաեւ միանձնյա որոշումներ կայացնել այն բողոքների առնչությամբ, որոնք ակնհայտ են:

2008-ին բողոքների քանակը կրկնապատկվել է նախորդ տարիների համեմատ՝ անցնելով 100-ից: Չնայած դրան, խորհուրդն ավելի արագ է քննում գործերը՝ միջինը 50 օրում:

Բողոքների մեծ մասը վերաբերվում է անձնական կյանքին: Երկրի ամենախոշոր թերթը մի հրապարակմամբ սեռական ոտնձգությունների համար մեղադրել է խորհրդարանի 7 անդամի, որից 5-ը դիմել են խորհրդին: Վերջինիս կայացրած 5 որոշումից 4-ը եղել է բողոքողների օգտին:

Խորհուրդը դիտարկում է, որ լրագրողները սկսում են տուրք տալ ֆինական հասարակությունում աճող հակմանը՝ ավելի շատ հետաքրքրվել հանրային գործչի անձնական կյանքով, քան հանրային գործունեությամբ: Ուստի, խորհուրդը վերջին տարիներին ստիպված է վերանայել լրագրողական էթիկայի նկատմամբ իր վերաբերմունքը:

Ֆրանսիա

Ֆրանսիայի մամուլի խորհուրդը դեռ նոր կազմավորման շրջանում է եւ ստիպված է շատ ջանքեր թափել ինչպես հանրային ուշադրություն հրավիրելու, այնպես էլ իր համակարգի արդյունավետությունն առավելագույնս մշակելու համար: Այդ նպատակով այն հանրային քննարկումներ է անցկացնում, փորձնական ծրագրեր իրականացնում, ու թեեւ արձանագրում է, որ սառույցը տեղից շարժվել է՝ լրագրողների միությունն այլեւս սկզբունքորեն դեմ չէ ինքնակարգավորման գաղափարին, բայց պրոակտիվ դիրքորոշում չունի:

2008-ի հունիսին ֆրանսական մամուլի խորհրդին հաջողվեց ստանալ 52 հեղինակավոր անձանց ստորագրություն՝ հօգուտ իրենց հայտարարությունների՝ «Տեղեկատվության որակի խարտիայի» եւ «Մամուլի կարգավորման մարմնի» մասին: Ստորագրությունների թիվը եռապատկվել է մի քանի ամսում, եւ ստորագրողների թվում են Լրատվական գործակալությունների ֆրանսիական ընկերակցությունը, Ֆրանսիայի սպառողների խոշորագույն ընկերակցություններից մեկը եւ այլ հեղինակավոր կազմակերպություններ: Սակայն այս նորաստեղծ մարմնի դեմ կա նաեւ հզոր հակազդեցություն հենց մամուլի կողմից: Մասնավորապես «Le Monde» պարբերականի օմբուդսմանը «շահարկում» եւ «անազնվություն» է դիտարկել մամուլի խորհրդում: